

Ս Ա Ն Ի Կ

Վ Ե Պ

Ա.

Երկաթուղու կայարանում սովորական իրարանցումն արդէն սկսուել էր: Գնացքի մօտալուտ գալուստը դահլիճում և դուրսը՝ պլատֆորմի վերայ հաւաքել էր հետաքրքրուողների և ճանապարհորդների մեծ բազմութիւն: Հետզհետէ գալիս էին նորանոր ճանապարհորդներ՝ ընդ առաջ ունենալով ծառաներին, որոնք շալակած ներս էին բերում դահլիճ նրանց իրեղէնները: Մարդկանց խօսակցութիւնից, երեխանց ճիչ ու աղաղակից, ծառաների շտապ շտապ ներս ու դուրս գնալուց բարձրացել էր դահլիճի մէջ մի տեսակ խուլ աղմուկ: Դուրսը, պլատֆորմի վրայ, տիրում էր աւելի մեծ կենդանութիւն: Պլատֆորմի երկայնութեամբ ճեմող ժողովրդի մէջ միշտ լսւում էին ծառայողների զգուշացնող աղաղակներ և այդ միջոցին զոգուցով սահում էր երկանիւ սայլակը՝ բեռնաւորուած ճանապարհորդների իրեղէններով: Ժամանակ առ ժամանակ շոգեկառքը ճչող սուլոց էր արձակում, երևում էր և շտապով անհետանում հետաքրքրուող ամբոխի աչքից: Աւելի անհամբեր անձինք աչք չէին հեռացնում այն կէտից, որտեղից պէտք է երևար մօտակալ կայարանից դուրս եկած որոշեալ գնացքը և տհաճութեամբ ձեռքը թափ տալով, շուռ էին գալիս ու շարունակում իրանց շրջագալութիւնը պլատֆորմի երկայնութեամբ:

Ահա՛ վերջապէս հեւալով ու քլթքլթալով մօտեցաւ գնացքը կայարանին և միանգամից կանգ առաւ պլատֆօրմի առաջ: Ճանապարհորդներին ընդ առաջ եկողները սկսեցին ընկնել մի վազոնից միւսը ու նայել պատուհաններից տեսնելու նրանց, որոնց սպասում էին: Անհամբեր ուղեկիցները՝ իրանց իրեղէնները ձեռքներին շտապում էին շուտով մտնել վազօնը և յարմար տեղ բռնել: Նորեկ ճանապարհորդները, որոնք պէտք է իջնէին այդ կայարանում, նոյնպէս շտապում էին մի ժամ առաջ դուրս գալ համբուրուելու իրանց սիրեցեալների հետ: Ահա՛ այս միջոցին աղմուկ ու իրարանցումին չափ ու սահման չկար: Մարդիկ իրար հրում էին, իրանց ձեռքի բազաժով ընդհարում, թուլներին և երեխաներին ոտնատակ անում:

Լևոն Դաւթեանին՝ իւր բազմաթիւ երթևեկութեան միջոցին միշտ ձանձրոյթ էր պատճառել այդ տեսարանը, այս պատճառով նա սովորութիւն էր արել գալ կայարան երկրորդ զանգից մի փոքր առաջ: Այս անգամ էլ նա դուրս եկաւ պլատֆօրմ այն ժամանակ, երբ արդէն ճանապարհորդները նստած էին վազօններում, իսկ դուրսը հետաքրքիրները բոլորովին հանդարտ ու հանգիստ կեցած էին վազօնների առաջ և խօսակցում ճանապարհ ընկնողների հետ: Լևոն Դաւթեանը ծառայի ուղեկցութեամբ, որ տանում էր նրա թեթեւ բազաժը, մօտեցաւ առաջին կարգի վազօնին և տեղաւորուեց մի յարմար անկիւնում:

Գնացքը տեղից շարժուեց:

Լևոն Դաւթեանցը մտախոհ կուչ էր եկել մի անկիւնում. նրան չէին հետաքրքրում փոփոխակի իրար յաջորդող տեսարանները: Դա մի լիսուն տարեկան մարդ էր, հանդարտ և վայելուչ շարժուածքներով: Նրա երեսի գծագրութիւնը կանոնաւոր էր, մօրուքը սեպի

պէս խուզած. նրա թուխ մագերը սպիտակ պիքով էր խառնուած: Ամուր շրթունքները, նրա արծուաքիթը, երկու հորիզոնական խորշը, որոնք անց էին կենում ճակատի վրայ յօնքերից մօտիկ, ցոյց էին տալիս նրա կամքի ուժեղութիւնը: Սակայն գորշագոյն աչքերում պարզ նկատելի էր քաղցր և անտարբեր հայեացք և ընդհանրապէս նրա դէմքը սառնութիւն էր արտայայտում: Նրա բաճկոնի կոճակը զարդարուած էր շքանիշով:

Լևոն Դաւթեանցը անտառապահութեան գլխաւոր վերատեսուչ էր: Դուրս գալով Անտառային ճեմարանից քսան և երկու տարեկան հասակում, նա շուտով հասաւ բարձր աստիճաններին ոչ թէ միայն նրա համար, որ լաւ տեղեակ էր իւր մասնագիտութեան, այլ նրա համար գլխաւորապէս, որ ցոյց տուեց իրան իբրև փորձառու կառավարիչ: Սիրելով իւր մասնագիտութիւնը, նուիրելով իւր բոլոր ոյժերը աշխատանքին, նա իւր տեսական հմտութեանը միացրեց և գործնական մարդու ընդունակութիւնը: Մի բան, որ նրան նախատինք էր բերում, այդ նրա հոգու սառնութիւնն էր—սառնութիւն եսամոլ ամուրի մարդու, որ կեանքից դժգոհ ընդունակ չէ օտարների ցաւը հասկանալու: Դաւթեանցի այս յանցանքը մասամբ պարտական է և այն պայմաններին, որոնց մէջ զարգացան նրա մանկութիւնն ու պատանեկութիւնը:

Հասարակ պաշտօնեայի որդի լինելով, նա առաջին տարիներից իսկ պարտաւոր էր ծնողաց հետ աստանդական կեանք վարել, որ այդ տեսակ պաշտօնեաների որդւոց դարձնում է անհայրենիք: Ծնողաց անվերջ շրջագալութեան միջոցին նա պարտաւոր էր ուտոտալ մի դպրոցից միւսը, մինչև որ վերջապէս լաջողեցաւ մտնել Անտառային ճեմարանը: Նա չէր համարձակում և իրաւունք էլ չուներ ասելու, թէ որտեղ է նրա ծննդա-

վալը, որի հետ այնպէս սերտ կապով կապում է մարդուն, որին սիրելի է դարձնում և գաւառը և տունը, ուր նա մեծացել է, քարեր, ծառեր, ամբողջ հորիզոնը, որ նա իւրաքանչիւր օր դիտում է: Դաւթեանցը զըրկուած էր նաև ընտանեկան քաղցր ժամերից և նրա պատանեկութիւնը ոչինչ բանով չտաքացաւ: Նա միշտ զբաղուած լինելով քննութիւններ տալով, աշխատում էր փութով բարւոքել իւր վիճակը: Նա չգիտէր թէ ինչ է կիրքը, որ այնքան քաղցրացնում է հոգին և տանջանքի է ենթարկում մարդուս ամբողջ էութիւնը: Երեսուն տարեկան հասակում նա կորցրեց իւր ծնողներին, չկարողանալով ճաշակել ընտանեկան ջերմ ուրախութիւն: Զրկուած հայրական կարողութիւնից՝ նրա միակ մտածմունքն էր որքան կարելի է շուտով ձեռք բերել անկախ ու պատուաւոր դիրք: Աշխատանքը կլանեց նրա կեանքը. փառասէր ձգտումներին հասնելու համար նա գործ դրեց բոլոր իւր ընդունակութիւնները: Նա չվրտահացաւ որոնել իրան լծակից, որովհետև լաւ էր հասկանում, որ ամուսնական լուծը կարող է խափանել նրա դիտաւորութիւնները: Այդպիսով նա մնաց ամուրի և համարեա օրն ի բուն զբաղուած էր իւր պաշտօնով: Առաւօտեան վաղ՝ վալով իւր պաշտօնատեղին, ուշ կէս գիշերին վերադառնում էր տուն, այն էլ քնելու համար: Այսպէս անցան նրա օրերը երեսնից մինչև լիսուն տարեկան հասակը միակերպ, կանոնաւոր, միշտ աշխատանքի մէջ, առանց որևէ մտերմութեան, առանց որևէ քաղցր հանգստութեան:

Սակայն այժմ, երբ իւր փառասէր ձգտումներից արդէն գոհ է, երբ պաշտօնավարութեան միջոցին կարողացաւ փոքրիկ կարողութիւն էլ խնայել, նա երբեմնապէս մի մելամաղձոտ հայեացք է ձգում դէպի անցեալը և գալիս այն եզրակացութեան, թէ որքան այդ անցեալը դատարկ է ջերմաջերմ լիշատակներով: Այժմ

միայն նա հասկանում է իւր մենակութիւնը: Մի մի անգամ, երբ նա դուրս է գալիս իւր ընկերակցի տնից, ուր նա լսել էր երեխայոց ճիչը ու երիտասարդ աղջկերանց ուրախ ծիծաղը և գալիս իւր միայնակեաց բնակարանը, նա զգում էր իրան միշտ ճնշուած. մի տեսակ սարսուռ, մի տեսակ ափսոսանք տիրում էր նրա ամբողջ մարմնին: Այդ միջոցին նա մտածում էր թէ ահա շուտով, շուտով պարտաւոր կլինի պաշտօնը, թողնել և քարշ տալ իւր ամուրի կեանքը: Այս միտքը նրան ցնցում էր և ամուսնութեան գաղափարը յամուսնութեամբ սկսում էր նրան հալածել: Նա նայում էր հայելու մէջ, հաւաստիանում էր թէ ինքը դեռ ևս երիտասարդ է. նա աւելի մէկին սիրելու մասին էր մտածում և մտքով անգամ չէր անցկացնում թէ նրան կարող են սիրել: Ամուսնութեամբ նա այժմ կամենում էր վատակել մի լծակից, որ երեխայք կծնի և կվերաստեղծէ նրա դատարկ կեանքը:

Այժմ էլ նստած շոգեկառքի մի անկիւնում, նա նորից անձնատուր եղաւ իւր մշտական խոհերին: Նա ճանապարհորդում է կառավարութեան յանձնարարութեամբ դէպի մի գաւառ, ուր պէտք է վերջացնէ հաշտութեամբ անտառային անվերջանալի վէճերը տեղացիների հետ. արդեօք այս յանձնարարութիւնը կը պսակու՞մ յաջողութեամբ:

Երկարատև սուլոցը իմաց տուաւ կայարանին մօտենալը: Լևոն Դաւթեանը տեղից բարձրացաւ, բաց արեց վագօնի պատուհանը և ամբողջ կրծքով ներշնչեց լեռնային զովացուցիչ մաքուր օդը: Տեսարանը սքանչելի էր: Կայարանը, որպէս թռչնի բոյն, լինուել էր անտառախիտ լեռան կողքին, որի մօտից պարզ ու վճիտ աղբերակներ կարկաչելով հոսում էին և թափուում մերձակայ ձորակը: Անտառապետի սիրտը լցուեցաւ ուրախութեամբ,

երբ նրա աչքի առաջ ներկայացան վիթխարի դարաւոր ծառեր՝ զարդարուած խիտ սաղարթով: Պէտք է խոստովանել, որ դէպի անտառը նա տածոււմ էր ջերմագին սէր և նա յափշտակվում էր տեսնելով այդ վիթխարիները, որոնց մէջ անց էր կացել նրա երիտասարդութիւնը: Անտառը, գեղջկական անշուք խրճիթը, քրտնաթոր գիւղացու հանգիստը տաժանակիր աշխատանքից, լետոյ մի որևէ ծաղկաւէտ մարգի վրայ նրան լիշեցնում էին շինական երջանիկ կեանքը: Միթէ մի ազնիւ գիւղացու կեանքը իւր կնոջ հետ, որին նա ընտրել է, իւր երեխանց հետ, որոնց նա մեծացրել է, հազար փառքով լաւ չէ այն շինծու կեանքից, որ նա վարում է քաղաքում: Միթէ ինքը Դաւթեանցը ամբողջ օրերով բեռած սեղանի առաջ և վարելով վարչական մեքենան, հազար անգամ օտար չէ զգում իրան, քան այն կալուածատէրը, որ կառավարում է իւր գիւղը: Հինգ, տաստարուց լետոյ, երբ նա կը դադարի վարել այդ մեքենան, քնչ կը լինի նրա հետ: Ծերուկեան հասած, պաշտօնաթող, միայնակ, ձանձրացած կեանքից, ինքն էլ չի իմանայ թէ ուր կը պատսպարի նա իւր գլուխը:

Այս անգամ էլ, ինչպէս միշտ, սֆինքսի պէս ներկայացաւ նրա առաջ նրան միշտ հալածող միտքը՝ արդեօք անցել է ժամանակը և միթէ չի կարող նա ամուսնանալ և ստեղծել իւր համար ընտանեկան օջախ: Այս անգամ, երևի մայիսի գեղածիժաղ և զովացուցիչ օգի ներգործութիւնից, նա չտատանուեց այդ հարցին գրական պատասխան տալուց: Նա միշտ վարել է պարկեշտ և չափաւոր կեանք և հաւատացած է, որ պահպանել է երիտասարդական աշխոյժը: Սա ցնորք չէ և չէ խաբուում: Նա ունի երկաթէ առողջութիւն, չէ կորցրել ոչ մի առամ և ոչ մի մազ. նրա կազմուածքը ամուր է, արեան շրջանառութիւնը կանոնաւոր: Ծանօթ

և բարեկամների տանը նա տեսնում է, որ կանայք չեն խորշում նրանից, մինչև անգամ բաւականութիւն են զգում նրա ընկերակցութիւնից: Սակայն նա այնքան էլ լիմար չէ, որ ամուսնանալ երիտասարդ օրիորդի հետ, բայց եթէ պատահի մի կին, որ երեսուն տարեկան լինի, մի ըոպէ էլ չի տատանուի կապել իւր կեանքը նրա հետ: Նա դեռ յիսուն տարեկան է: Նա կարող է հասնել իւր երեխաների մեծանալուն և ո՛վ գիտէ գուցէ իւր ձեռքով էլ պսակէ նրանց:

Մինչդեռ Դաւթեանը խորասուզուած էր այս մտածմունքների մէջ, գնացքը սլանում էր հովտի միջով, ուր երևում էին ցորենի վտիտ արտեր և հեռուից անտառի ծառախմբեր: Մի սուր սուլոց նորից հնչեց օդի մէջ և մի քանի ըոպէից յետոյ գնացքը կանգ առաւ:

— Գ. կնյարան: Տասը ըոպէ դադար, — լսուեցաւ կոնդուկտորի ձայնը:

Դաւթեանը պէտք է իջնէր այս կայարանում: Նա հաւաքեց իւր բագաժը և դուրս նայեց պատուհանից որոնելով պլատֆորմի վրայ տեղական անտառապետին, ճեմարանի իւր ընկերակցին, որին ազդարարել էր իւր գալու մասին:

Անտառապետը իրաւ այնտեղ էր. նա խուզարկում էր իւրաքանչիւր վագօն: Սա մի կարճահասակ գեր մարդ էր պաշտօնական զգեստով:

Դաւթեանը իջաւ և երկու ընկերները սեղմեցին միմեանց ձեռքերը:

— Ուրախ եմ որ տեսնում եմ ձեզ, պ. վերատեսուչ, սկսեց անտառապետը... բարով էք եկել:

— Ծնորհակալ եմ, սիրելի Բարամեան... Ա՛խ, դու ինձ հետ այժմ «գո՛ւլք»ով ես խօսում, դու, իմ նախկին ընկերակիցդ:

— Տէր Աստուած, մրմռաց Բարամեանը, ես կար-

ծեցի, որ ստորագրելու թեան պատշաճաւորութիւնը...

— Հաննաք ես անում... մեր մէջ ստորագրելու թեան պատշաճաւորութիւն տեղի չպէտք է ունենայ... Ասն ինձ իսկոյն «գու», ապա թէ ոչ, ես չեմ իջնիլ քեզ մօտ:

— Հնազանդուում եմ, պատասխանեց անտառապետը, որ ըստ երևոյթին շատ ուրախ էր:

Ինքը Բարամեանը գնացքին սպասելու միջոցին գլուխն էր կոտրում, թէ ինչպէս հանդիպէ իւր նախկին ընկերակցին, որ այժմ հասել է աւելի բարձր պաշտօնին: Նա նայեց Դաւթեանին և ժպտալով ասաց. —

— Դու բոլորովին չես փոխուել. նոյն աշխոյժ և առողջակազմն ես, ինչպէս քեզ տեսել եմ ճեմարանից դուրս եկած ժամանակ:

— Շողոքորթ, պատասխանեց Դաւթեանը: Մոռանում ես, որ մենք երկուսս էլ ծերացել ենք. այն օրից արդէն քսան և ութ տարի է անցել:

Այնուամենայնիւ ընկերոջ խօսքը Դաւթեանին շատ հաճելի էր: Մանաւանդ որ նրա հասակակիցը նրանից աւելի ծեր էր երևում: Բարամեանը հասակի հետ գերացել էր. երեսի վրայ նշմարուում էր ապտիտ: Եւ շատ հաւանական է, քանի որ գաւառական միակերպ կեանքը սպառում է մարդու աշխոյժութիւնը, քնացնում է զգացմունքները:

Նրանք այժմ սայլակով սլանում էին:

— Ամուսինս մեզ սպասում է ճաշի. լետոյ մի փոքր կը հանգստանաս: Պէտք է նախապէս լալտնեմ քեզ, որ այս երեկոյ ի պատիւ քո հիւրեր եմ հրաւիրել:

Դաւթեանին անախորժ թուաց այս և բացականչեց.

— Ա՛խ, դու... որոգայթ ես լարում իմ դէմ...

— Չէի կարող, հաւատացիր... պէտք էր, մեր լարաբերութիւնը այդ պահանջում էր. սակայն մի շփո՛

Թուիր՝ հրաւիրեալները շատ էլ չեն. տեղիս հաշտաւոր դատաւորը, պրիստաւը, իմ օգնականը իւր կնոջ հետ. սրանք են համարեա մեր ամբողջ հասարակութիւնը կազմում:

—Այդքան էլ շատ է, ասաց Դաւթեանը ժպտալով:

—Ա՛խ, քիչ մնաց մոռանալի... մեզ մօտ կլինի և կնոջս բարեկամ մի կին, տիկին Աշխարբէգեանը, այստեղի կալուածատէրը: Դու շատ գոհ կը մնաս նրանից: Եթէ կարողանալիք նրան փոքր ինչ խելքի բերել, անտառալին վէճը դիւրութեամբ կը վերջանար, որովհետև նա ամենալուրջ և ամենանեղոտ հակառակորդն է կառավարութեան... Ահա, մենք էլ հասանք:

Սալակը կանգնեց դատարկ փողոցում: Բարամեանը իսկոյն ցած թռաւ կանչելու ծառային, որ իրեր ներս տանի: Մինչ այդ Դաւթեանցը մնալով այնտեղ դիտում էր փողոցի ծալրին գտնուող հին եկեղեցին և ինքն իրան մտածում, թէ որքան տաժանելի կլինի նրա համար մնալ մի առ ժամանակ այս մեռած գիւղաքաղաքում:

Բ.

Երեկոյեան, մօտ 8 ժամին, Դաւթեանցը սկսուեց հագնուիլ հանդիսատես լինելու այն երեկոյթին, որ նախկին ընկեր Բարամեանցը կազմել էր ի պատիւ նրա: Հագնուելիս նա մտածում էր, որ ինքը իբրև կառավարութեան ներկայացուցիչ ամբողջ երեկոյ կը դառնայ հիւրերի հետաքրքրութեան առարկայ և պարտաւոր կը լինի խօսել և վիճել նրանց հետ անտառալին վէճերի մասին: Նա լիջեց տիկին Աշխարբէգեանցին, որ տիկին Բարամեանցի բարեկամուհի լինելով, նրա պէս մի քառասուն տարեկան կին պէտք է լինի, արդէն հասակն

առած, անհամակրելի: Դաւթեանցին մի տեսակ տխրութիւն տիրեց:

Երբ նա մտաւ ընդունարանը, որ կահաւորած էր հասարակ կերպիւ, արդէն բոլոր հիւրերը հաւաքուել էին: Մէկ մէկ նրանց ներկայացրին Դաւթեանցին: Հաշտարար դատաւորը մի կարճահասակ մարդ էր, ածիլած երեսով և կայտառ ու զուարթ դէմքով. պրիստաւը՝ ընդհակառակը, երկար, հաստ ու գեր էր բոխ ձայնով: Բարամեանցի օգնականը պնդակազմ թուխ երեսով և խիտ յօնքերով մարդ էր: Հին պաշտօնեայի տիպ, որ այժմ շատ հազուադէպ է, մինչդեռ սրա կինը, նիհար էր, համարեա չորացած, հագին հին տարազի մոխրագոյն շրջագետ, հուլունքներով զարդարուած: Սա նստած էր տ. Բարամեանցի հետ գահաւորակի վրայ խօսակցելով զանազան ընտանեկան զբաղմունքների մասին: Դաւթեանը մի կողմ տարաւ անտառապետի օգնականին և սկսեց խօսակցել նրա հետ թէ ինչպէս աւելի յարմար կըլինի բաժանել անտառը, որպէս զի ժողովրդի անվերջ արտունջներին գոհացում տրուի: Անտառապետը շատ յուզուեց վերատեսչի այդ ուշադրութիւնից և սկսեց տալ նրան լիակատար բացատրութիւն: Մօտ քառորդ ժամ նրանք այդպէս խօսակցում էին. այդ միջոցին լսուեցաւ Բարամեանի բացազանչութիւնը.

— Ա՛խ, վե՛րջապէս... համբերութիւնս հատաւ... Բնչու ուշացաք, սիրելի տիկին..

Այս բացազանչութեանը հետեւեց մի քաղցր ձայն.

— Ներեցէք. ուշանալուս համար:

Նայն ըրպէին տ. Բարամեանը մօտենալով նորեկ հիւրին, առաւ նրա թևը և դիմելով դէպի սեղանատուն՝ հրաւիրեց միւս հիւրերին էլ հետեւել նրան: Հենց դրան շէմքին նա լիջեց, որ նորեկ հիւրի հետ չէ ծանօթացրել Դաւթեանին, ուստի դառնալով նրան ասաց.

— Ո՛րքան շփոթուած եմ... Թող տուէք ինձ ներկայացնելու ձեզ իմ բարեկամին՝ տիկին Կատարինէ Աշխարհբէգեան, կալուածատէր Ծաղկաբուն գիւղի... Պ. Դաւթեան, անտառապահութեան գլխաւոր վերատեսուէ:

Դաւթեանը շփոթուեց. նա կարծում էր թէ տեսնելու է մի հասակն առած կին, այն ինչ ներկայացուածը շատ երիտասարդ էր մօտ քսան ու վեց տարեկան, թեթև, քնքոյշ, ժպտող թուխ աչքերով, որին նա շատ հաւանեց: Նա հիացած մնաց և անգիտակցաբար բարևեց: Տ. Աշխարհբէգեանցի սուր աչքերից չծածկուեց Դաւթեանցի շփոթը ու հիացումը: Իրաւ տիկնոջ դէմքը այն տեսակիցն էր, որ մարդ կարծում էր, թէ մի անգամ էլի տեսել է և թէ արդէն՝ մի տեղ էլի պատահել է: Տ. Աշխարհբէգեանը թեթև գլխի շարժումով բարևեց Դաւթեանին և յետոյ ամենքը դիմեցին սեղանատուն:

Սեղանատանը ինքնաեռը արդէն բլթբլթում էր: Սեղանի վրայ դարստած էին զանազան խմորեղէններ ափսէներով, տեսակ խտսակ քաղցրաւենիներ բիւրեղեայ անօթների մէջ. մի մեծ մատուցարան լիքը անուշեղէններով. իսկ եղանակին յարմար թաց պտուղները՝ կեռասը, ազնիւ ելակը, նորահաս կարմրաշուրթ տանձիկներ հրապուրում էին իրանց տեսքով ու անուշահոտութեամբ:

Ամենքը նստոտեցան սեղանի շուրջը: Դաւթեանցի դիմաց նստած էր տ. Աշխարհբէգեանը: Նա այժմ միջոց ունէր աւելի լաւ տնտղելու նրան:

Տիկինը սքանչելի էր: Մանաւանդ հրապուրում էին նրան տիկնոջ պայծառ և կենդանի աչքերը, սաթի նրման սևաթուր մազերը, անմոռանալի ժպիտը:

— Տիկինը այլի է, ասաց նրան հարևանը կիսաձայն, իբրև պատասխան նրա դիտողութիւններին:

— Ի՛նչպէս, զարմացմամբ ասաց նա, նոյն կերպիւ:

—Այո՛, ահա երկու տարի է, ինչ որ կորցրեց իւր ամուսնոյն... Անդաւակ է և ապրում է մէնակ գիւղում:

Դաւթեանը, որ կիսաձայն վիճում էր իւր հարեան անտառապետի օգնականի հետ և նրան մեղադրում անտառային գործերի դանդաղ ընթանալու մէջ, մի մի անգամ չէր փախցնում իւր աչքից կնոջ երեսը:

—Ա՛խ, դուք բարի չէք եղել դէպի ժողովուրդը, յանկարծ ձայնեց տիկինը և բարձրացնելով գլուխը, նրկատեց Դաւթեանի իրան յառած հայեացքը: Տիկինը ժըպտաց և շարունակեց:—Նայեցէք, ես ձեզ հետ եմ, պ. վերատեսուչ:

—Բանն ինչումն է, տիկին, հարցրեց Դաւթեանը քաղցրաձայն:

—Անտառի բաժանման մասին է. չէ՞ որ ես էլ վէճ ունիմ... Զեր վարչութիւնը մեզ առաջարկում է մի այնպիսի տեղ, որ թէ հեռու է գիւղից և թէ անյարմար տաւարը արածելու համար: Եւ այս բանը դուք արդարադատութիւն էք համարում...

Տիկին, ծիծաղելով ասաց Դաւթեանը, դուք խնդիրը քննում էք փորձուած իրաւաբանի պէս:

—Ո՛հ, մէջ բերաւ Բարամեանցը, դու կը տեսնես թէ ում հետ գործ կուեննաս. տ. Աշխարբէգեանը իւր իրաւունքներից մի մազի չափ էլ չի զիջանիլ:

—Թէ իմ և թէ ուրիշների, սիրելի Բարամեանց, ասաց երիտասարդ տիկինը ոգևորուած. Ծաղկաբունի բնակիչները ինձանից աւելի արժանի են, որ յարգուին նրանց պահանջները. դրանք շատ աղքատ են. սրանք իրանց տաւարը արածելու համար պարտաւոր են քշել մի անտառ, որ չէ բաժանուած և որ գիւղի հետ չէ միացած կանոնաւոր ճանապարհով:

—Նրանց կրած վնասին մենք զարման կանենք՝ կը հարթենք լաւ ճանապարհը:

— Կը տուժէք արդեօք նաև ժամանակի կորուստը և այն վնասը, որ նրանք կրում են վատ արօտից: Անտառը լի է ճահիճներով. ախ, եթէ դուք ճանաչէիք այդ տեղը, պ. վերատեսուէ:

— ձանաչում եմ, ասաց Դաւթեանը. հէնց այդտեղ, այդ Ծաղկաբնում անտառապետի օգնականի պաշտօնով սկսեցի ծառայութիւնս:

— Ախ, Իրաւ, բացադանչեց տ. Աշխարբէգեանը, ուրեմն...

Նա նայեց իւր շուրջը, տեսաւ որ հաշտարար դատաւորը և անտառապետի օգնականի կինը յօրանջում են և սկսեց ծիծաղել:

— Ներեցէք, աւելացրեց նա, ես մոռացայ որ այս վիճաբանութիւնը չի կարող հետաքրքիր լինել պ. Բարամեանցի հիւրերին. ես այստեղ ընդհատում եմ, բայց ինձ յաղթուած չեմ համարում:

Խօսակցութիւնը ընդհանուր դարձաւ ի մեծ ցաւ Դաւթեանցի: Նա շատ էր գրգռուած այն եռանդով, որով տ. Աշխարբէգեանը պաշտպանում էր իւր իրաւունքները: Այդ կնոջ առանձնատկութիւնը միւս հիւրերի հակապատկերն էր ներկայացնում: Վիճաբանութեան ամենատաք ժամանակ նա սքանչելի էր. նրա մէջ չէր նշմարուում ոչ անբնական և ոչ արուեստական մի բան. երևում էր, որ այն ինչ որ ասում էր, անկեղծ էր, վեհանձնութիւնը բղխում էր ուղիղ սրտից: Դաւթեանցը շատ հաւանեց տիկնոջը նրա յատկութիւնների համար, որոնք նման չէին իրանին: Այդ անձնապաստան, խոհական մարդը բոլորովին յափշտակուած էր տ. Աշխարբէգեանի ուրախ ու զուարթ բնավորութեամբ:

Թէյն վերջացաւ. հիւրերը մէկ մէկ դուրս եկան ընդունարանը: Դուրս եկաւ և Դաւթեանը և սենեակի մէջ պտոյտ գալով, աշխատում էր տ. Աշխարբէգեանցի մօտիցը չը հեռանալ, նրա աչքին ընկնել: Մինչդեռ տա-

նուտէրը և տանտիկինը աշխատում էին նստացնել հիւրերին կանաչ սեղանի շուրջը թուղթ խաղալու, Դաւթեանցը մօտեցաւ գահաւորակին, ուր նստած էր սքանչելի տիկինը:

— Պարոն, ասաց նա, եթէ դուք սովորութիւն չունիք թուղթ խաղալու, կարող էք այստեղ նստել:

Միևնոյն ժամանակ նա մի փոքր լետ քաշուեց, տեղ տալով նրան գահաւորակի վրայ:

Դաւթեանին էլ այդ էր հարկաւոր: Թէև ինքը երես առած չէր կանանց հաճոյքներէից, սակայն այս հանգամանքը շարժեց նրա երևակայութիւնը այն յոյսով, որ տիկինը նրան հաւանում է և նա շատ գոհ մնաց: Գոհ մնաց նրա համար մանաւանդ, որ մի մարդ յիսուն տարեկան հասակում, արդէն ծերութեան մօտեցած կարող է դեռ ևս հաճելի լինել մի սքանչելի կընոջ, որ քսան և վեց տարեկան է: Բայց ինքը չէ խաբւում արդեօք. այդ հաճոյքները անկեղծ են արդեօք. չլինի՞ տիկինը աշխատում է այդ կերպիւ զրաւել նրան այն յօսով, որ անտառային վէճը իւր ուզածին պէս վրձոււի: Սակայն տիկնոջ վարմունքը ինքնաբեր է երեւում և յատուկ նրա բնաւորութեան:

Նստած գահաւորակի վրայ, տիկնոջ կողքին, Դաւթեանը իւր բոլոր ուշադրութիւնը լարել էր կարգալու տիկին Աշխարհէգեանի երեսի վրայ իւր կասկածանքի պատասխանը: Տիկինը մի թևով անհոգութեամբ լենուած գահաւորակի բազկին, միւսով մեղմ և քնքշաբար հովհարելով իւր երեսը, մի այնպիսի ներքին անդորրութիւն էր արտայայտում, որ դժուար էր կասկածել նրա կեղծութեան վերայ: Տեսնելով նրան այս դրութեան մէջ, Դաւթեանցը սրտապնդուեցաւ: Ոչ, տիկնոջ պայծառ աչքերը, բաց ու պարզ ճակատը, շրթունքները, խորամանկութեան ոչ մի հետք չեն արտայայտում: Նրա շա-

գանակագոյն բիբի խորքը ստուգեան ոչ մի նշոյլ չէ պարունակում: Ոչ ճակատը, ոչ բերանը չունէին այն ծալքերը, որ այժման յատուկ են նենգամիտ հոգիներին:

Տ. Աշխարհեզեանը յանկարծ ծալեց իւր հովհարը և թեքուելով Դաւթեանցի կողմը ասաց.

— Ուրեմն, պարոն, դուք բնակուել էք Ծաղկաբնում:

— Այո՛, տիկին, երկու տարու չափ:

— Շատո՞ւց է:

— Այո՛, շատ շատուց է. այն ժամանակ դուք ծրնուած էլ չէիք լինիլ: Բայց ես լաւ լիշում եմ տեղը, կարծես երէկ էր այդ: Ես պարզ տեսնում եմ այն ճանապարհը, որ տանում է դէպի ձեր դղեակը, որի մօտով ես յաճախ անց եմ կացել. նա գեղեցիկ ծառուղի էր շրջապատուած մատաղ հացենիներով:

— Մատաղ հացենիներն այժմ մեծացել են և առատ ստուեր ունին:

— Այդ ժամանակ, շարունակեց նա, դղեակում ապրում էր մի օտարոտի մարդ, որի անունն էր Մարգարէզ: Նա ամբողջ օրով փակուած էր տան մէջ և միայն գիշերով դուրս էր գալիս մի ծառայի ուղեկցութեամբ, որ իւր տիրոջ պէս մի այլանդակ մարդ էր:

— Այդ օտարոտի մարդը պապս էր, ընդհատեց տիկինը, ծիծաղելով:

— Ա՛խ... ներեցէք...

— Ի զուր էք ներողութիւն խնդրում, ասաց տիկինը. իրաւ նա օտարոտի մարդ էր և եթէ դուք ինձ ստիպէք, կը խոստովանիմ որ ես նախապաշարուած էի նրա դէմ... նա դեռ էլի կենդանի էր, երբ ես ամուսնացայ. նա տուաւ ինձ օփիտ դղեակը այն պայմանով, որ ես և ամուսինս բնակուէինք նրա մօտ... վերջապէս նա մեռաւ, խեղճ մարդը և խոստովանում եմ, որ եր-

կար ժամանակ սուգ չպահեցի... նա կարող էր ինձ զգուեցնել տալ Ծաղկաբուներ...

— Դուք ամբողջ տարին ապրում էք այնտեղ:

— Ամբողջ տարին, հազիւ մէկ երկու անգամ ժամանակ եմ գտնում այցելելու քաղաքը, այն էլ ստիպողական գործերով: Մի շաբաթուայ քողաքային կեանքը ինձ նորից քշում է դէպի իմ դղեակը:

— Իրաւ, ձեր հասակում... միթէ մենակութիւնից չէք ձանձրանում. միթէ չէք տխրում:

— Երբեմն... բայց պէտք է ձեզ ասեմ, որ ես գիւղացու ընաւորութիւն ունիմ: Հէնց սկսում է գարունքը՝ ես միշտ դուրսն եմ բաց օդի մէջ... Ես զբաղուած եմ անասուններովս, ծաղիկներովս. վերահասու եմ լինում անտառիս: Հաւատացնում եմ ձեզ, որ տխրութիւնը գոյութիւն չունի ինձ համար:

— Իսկ ձմեռը:

— Զմեռը սենեակս տաք՝ վառում եմ և գիրքը ձեռքիս նստում և եմ վառարանի մօտ... դպրոցից արդէն սովորութիւն եմ դարձրել կարդալ: Կարդում եմ, կար եմ անում և այսպէս ժամանակը անց է կենում անկատելի:

Թղթախաղը շարունակում էր: Բարամեանը և անտառապետի օգնականի կինը մեծ եռանդով հետևում էին խաղին, բոլորովին ուշադրութիւն չգարձնելով խօսակիցների վրայ: Սրանք էլ նստած մեկուսի շուտով մտերմացան: Տ. Աշխարհեգեանը այլ ևս չէր քաշում իւր խօսակցից, որի հետ մի ժամ առաջ միայն ծանօթացաւ: Իսկ Դաւթեանը բոլորովին յափշտակուած էր այդ համակրելի երիտասարդ կնոջով: Նա մեծ ուրախութեամբ լսում էր նրան և զուարթ էր զգում իրան աշխոյժ և հրապուրիչ հարեանից: Նա գտաւ տիկնոջ մէջ եւ մեծ խելք եւ հարուստ ընդունակութիւններ:

Մնորհիւ ընթերցանութեան տիկինը կազմել էր և՛ անկախ կարծիք և՛ կրիտիքական հայեացք: Մի ժամուայ չափ խօսակցութիւնը բաւական էր յափշտակուելու տիկին Աշխարհեգեանցով և նա շատ գոհ էր, որ երեկոն ուրախ անցաւ: Բայց ամենից մեծ զարմանքն այն էր, որ բոլոր խօսակցութեան միջոցին տիկինը ոչ մի անգամ ոչ ուղղապէս և ոչ ակնարկութեամբ չլիջեց այն խնդիրը, որ նրան յանձնարարած էր և որ այնքան մօտիկ էր տիկնոջ սրտին:

Մի փոքր լուութեան ժամանակ, յանկարծ տիկինը վեր թռաւ տեղից և նայելով ծոցի ժամացոյցին բացականչեց.

— Արդէն ժամի տասնումէկն է. ժամանակ է գնալու: Նա մեկնեց ձեռքը Դաւթեանցին:

— Բարի գիշեր, ոչ ցտեսութիւն, որովհետև դուք Ծաղկաբնում շուտով կլինէք: Վաղուանից հենց ես տանն եմ. չնայած որ մենք, պաշտօնապէս ասելով, հակառակորդներ ենք, սակայն յուսով եմ, որ պատիւ կունենամ ձեզ տեսնելու ինձ մօտ:

Տիկին և պարոն Բարամեանցները թէև շատ աշխատեցին տիկնոջ ընթրիքի պահել, բայց նա յամառութեամբ պնդեց իւր ասածի վրայ և իբրև օդաքար անյայտացաւ, թոյլ չտալով մինչև անգամ անտառապետին իրան ուղեկցել:

Գ.

Միւս օրը Դաւթեանը զարթեց ուրախ տրամադրութեան տակ: Ամբողջ գիշերը նա երազել էր ուրախ և քաղցր երազներ. հրաշալի տ. Աշխարհեգեանի ուրուականն էր գլխաւորապէս նրա երազների առարկան: Նա այժմ էլ լիջեց, որ այսօր նա պէտք է վերադառ-

նայ Ծաղկաբուն, ուր ինքն էլ պէտք է շտապէ գործով: Գիւղաքաղաքն իւր հինաւուրց եկեղեցիով, բարեկամ Բարամեանի բնակարանը մի տեսակ ճնշող ազդեցութիւն էին գործում նրա վրայ և նա շտապեց հագնուել:

Առաւօտեան ճիշտ ութ ժամին նա նստած սայլակում սլանում էր դէպի Ծաղկաբուն գիւղը: Ծանապարհը քարքարոտ էր. նրա երկու կողմից երևում են գիւղացուց քրտնաթոր աշխատութեան պտուղներ. ցորենի և գարու արտերն առաւօտեան մեղմ քամուց ալիքանման ճոճւում էին: Երկինքը ծածկուած էր նօսր ամպերով, որոնց միջով արևը հազիւ թափանցում էր իւր բաց դեղնագոյն ճաճանչները: Բնութիւնը յարմարուում էր Դաւթեանցի մտածմունքներին: Ուղիղն ասած սրանք աւելի ցնորքներ էին, քան մտածմունքներ: Օրորուելով և անյարմտը սայլակի մէջ շարունակ վերուվեր թռչելով նրա աչքի առաջ անցնում էր անցած զնացած ժամանակը, պատանեկութեան այն երջանիկ օրերը, երբ առաջին անգամ նշանակուեց անտառապետի օգնականի պաշտօնով այս լետ ընկած խուլ անկիւնում: Հեռուից նրա ականջին հասնող անտառի շշուկը լիջեցրեց նրան այն տեղը, ուր այժմ գնում էր ուրիշ աւելի ծանր յանձնարարութեամբ. նա պէտք է հաշտեցնէ վարչութեան և ժողովրդի շահերը, անտառային արօտատեղեր բաժանելով ըստ պահանջման հարկի: Այնտեղ, այն գիւղում, նա ճանաչում է մի բարի, նահապետական ընտանիք, որը երկու տարուալ ընթացքում նրան հայրութիւն է արել, սփոփել նրա միայնութիւնը, տաքացրել նրա պանդուխտ սիրտը սիրով ու գգուանքով: Զիաների ոտները տրոփիւնից վախեցած դուրս թռաւ արտերի միջից մի արտուտիկ և սլացաւ դէպի երկինք. նրա քաղցրաձայն գայլալիկը հեռու երկնակամարի տակից էլի հաս-

նում էր Դաւթեանցի ականջին և լիշեցնում նրան տ. Աշխարհեգեանցի քաղցր ձայնը: Այժմ նա մտքով տիկնոջ գղեհկուսն է:

Ճանապարհը ծանրացաւ. սալլակը բարձրանում էր զառիվարով. սալլապանը իջաւ ձիաների ծանրութիւնը թեթեւացնելու համար և սալլակի կողքից գնալով կամ քարկանում էր ձիաների վրայ կամ քաղցր խօսքերով նրանց քաջալերում: Ձիաները հեալով, փրթփրթալով դանդաղ քալլերով առաջ էին գնում: Ինքն էլ Դաւթեանցը թէ սալլակը թեթեւացնելու և թէ իրան քնէաճուրթիւնից ազատելու համար հետեւեց սալլապանի օրինակին և սկսեց գլխակոր առաջ շարժուիլ ոտքով: Մի մի անգամ նա կանգ էր սունում, ճանապարհի ափից կտրում յօշօշի ծաղիկը կամ ճարճատուկի տերևը և քննելով նորից վայր ձգում: Օրը հետզհետէ տաքանում էր. ճանապարհը աւելի էր ծանրանում: Ձիաների պայտերը աւելի ծանր էին դիպչում տափին ու սուր ձայն հանում. մէջէմէջ լսում էր զեռուկների ճռճուցը կամ հեռու հեռու տեղից արտուտիկի երգը: Երնական այս տեսարանը մին մին զարթեցրեց Դաւթեանցի մէջ արգէն վազուց հանգած լիշողութիւնները:

Ինչպէս այսօր, քսանևվեց տարի առաջ նա բարձրանում էր նոյն զառիվարով լի հաւատով և լուսով իւր ապագայի վրայ: Այն ժամանակ նա աւելի երիտասարդ էր ու աշխոյժ և դժուարութիւն չէր պատճառում նրբան այս զառիվարը: Նա լիշեց թէ նոյն երեկոյ, երբ եկաւ գիւղը, որպիսի տիրութիւն պատեց նրա հոգուն: Երբ մայրաքաղաքից յետոյ ընկնել այս վայրենի խուլ անկիւնը շատ զգալի է մի երիտասարդի համար, որ նոր է մտնում կեանքի ասպարէզ: Թէև նա մանկութիւնից սովոր էր չարքաշ կեանքին և ընտելացել ամեն տեսակ զրկանքներին, սակայն մի քանի տարուայ կեանքը մայ-

րաքաղաքում բաւական փոխել էր նրա աշխարհայեցողութիւնը: Այստեղ, այս գիւղում, կեանքը ուրիշ ընթացք ունէր, նա պէտք է շփուէր մի այլ հասարակութեան հետ: Գիւղի շրջակայքում թէև կային կալուածատէրեր, բայց նրանք այնքան հիւրասէր չէին և երիտասարդ անտառապետից աւելի խորշում էին, քան թէ նրան իրանց մօտեցնում: Ամառը դեռ էլի կարողանում էր սփոփել իւր միայնութիւնը շրջելով գիւղի շրջակայքում, իսկ ձմեռը, այն դժնդակ եղանակին, նրա դրութիւնը անտանելի էր: Գրքերը, որ նա բազմիցս կարդացել էր և որ համարեա անգիր գիտէր, զգուանք էին պատճառում նրան: Ժամերն անցնում էին դանդաղ ու դատարկ, միայնութիւնը ատելի էր դարձել նրան:

Գիւղում նա վարձել էր մի սենեակ նոյն տեղի տանուտէր Գասպար իւզբաշու խրճթում: Սկզբում բնականաբար նա քաշուում էր թէ իւր տանտէրից և թէ միւս գիւղացիներից և բացի պաշտօնական յարաբերութիւնից նա ոչինչ առնչութիւն ունէր նրանց հետ: Սակայն շուտով, հէնց ձմեռուայ սկզբներին, նա իւր անվերջ շրջագայութեան միջոցին ծանր հիւանդացաւ և երկար ժամանակ անկողնին ծառայեց: Ահա, այս միջոցին միայն նա հասկացաւ իւր յանցանքը թէ որքան անարդար էր դէպի այդ արարածները: Դրանց, ըստ երևութին, կոշտացած մարմնու տակ բաբախելիս է եղել մի այնպիսի սիրտ, որին կը նախանձէին ոչ միայն հասարակ քաղաքի, այլ և մայրաքաղաքի շատ ու շատ բնակիչներ: Գասպար իւզբաշին և նրա ընտանիքի բոլոր անդամները այդ երկու ամսուայ ընթացքում մեծ կարեկցութեամբ և ծնողական խնամատարութեամբ հսկում էին իրան. նոյն իսկ գիւղի բոլոր բնակիչներն անդադար տեղեկութիւն էին հարցնում մի օտար, զարիբ

մարդու առողջութեան մասին և նրանք անկեղծօրէն կամ տխրում կամ ուրախանում էին, լսելով նրա հիւանդութիւնը: Ի՞նչ էր նա նրանց համար. մի վարչական անձն, որի պաշտօնէութեան վրայ գիւղացիք առհասարակ ծուռ աչքով են նայում: Այս հանգամանքը մտերմութեան սերտ կապ հաստատեց նրա և Գասպար իւզբաշու մէջ: Սա մի ինքնուրոյն, խելացի և ջերմեռանդ ազօթասէր մարդ էր, նահապետական մի տիպար, որ տարբազարտաբար հետզհետէ մանրանում է կամ չքանում շնորհիւ կեանքի այլ և այլ պատահարներին... Նա մօտ քառասուն տարեկան առողջ ու վայելչակազմ մարդ էր, ճարտարախօս և լաւ խօսակից, սիրում էր իւր պատմածները համեմել սրախօսութիւններով ու կատակներով: Աշխատութեան մէջ նա առոյգ էր ու անդադրում, բնաւորութեամբ հեղ ու հաշտ, գործավարութեան մէջ արդարադատ: Համագիւղացիները նրան պաշտում էին և իրանց շատ գործերը, որոնք նրա իրաւասութիւնից դուրս էին, յանձնում նրա վճռին և Գասպար իւզբաշու վճիռը սուրբ ու անքակտելի էր նրանց համար: Արդարև այդպիսի մարդուն անկարելի էր չսիրել ու չյարգել և Գաւթեանցը միշտ ակնածութեամբ էր վերաբերում դէպի նա:

Գասպար իւզբաշու ընտանիքը մեծ չէր: Տանտիկինը բոլորովին ընդունել էր իւր էրիկի վարք ու բարքը և տնային աշխատութեան մէջ լեռ չէր մնում նրանից: Ունէր նա մի տղայ և մի աղջիկ, որոնք դեռահաս էին և առ այժմ անօգուտ ընտանիքի համար: Գասպար իւզբաշին շատ էր սիրում նրանց և համարեա դողում էր նրանց վրայ: Նա արդէն մի քանի զաւակներ կորուսել էր զանազան համաճարակ հիւանդութիւնների շնորհիւ, ուստի նրանց ամեն մի քայլին հսկում էր աչայրջութեամբ և պէտք էր տեսնել այդ հսկայ

մարդու սարսափը, երբ նրանցից մէկն ու մէկը հիւանդանում էր: Այդ պատճառով ամեն մի նոր զաւակի երևալը բարի ընտանիքին անսահման ուրախութիւն էր պատճառում: Դա համարուում էր Աստուածային մի պարգև այն բոլոր դառնութիւններից յետոյ, որ կրել էր ընտանիքը: Այդպիսի մի միջադէպին նա ներկայ եղաւ: Նա լաւ յիշում է այդ օրը. մի շաբաթ գիւղից բացակայ էր և հէնց դադրած, տանջուած վերադառնում էր տուն հանգստանալու, նրան հանդիպեց Գասպար իւզբաշին ուրախ, զուարթ երեսով, հեռուից արդէն բարձրաձայն գոչելով.

— Բարով եկաք, հազար բարի, քաւոր ջան:

Գասպար իւզբաշու այս բացագանչութիւնը նրան շատ զարմացրեց: Վերջը իմացաւ, որ բարի մարդը ուխտել էր, եթէ Աստուած նրան արու զաւակ պարգևէ՝ անպատճառ մկրտել տայ իւր տնկից անտառապետին: Դաւթեանցը բնականաբար չմերժեց բարի գիւղացու խնդիրը և զաւակին մկրտելուց յետոյ այլ ևս երկար չմնաց պաշտօնով նույն գիւղի մէջ, որովհետև ստացել էր մի աւելի բարձր պաշտօն հեռու շատ հեռու այն երկրից: Չնայելով որ այդ օրից անցել է քսան և վեց տարի և այդ երկար միջոցին նրանց մասին լուր չէ առած, բայց և այնպէս պահպանել է անջնջելի յիշատակ իւր վաղեմի բարեկամների մասին:

Միայն մահը բերում է իւր հետ իսկական մոռացում: Կեանքի մէջ մարդս պատահում է շատ բաներին և անձերին, որոնք յիշողութիւնից չեն անյայտանում: Այժմ քանի մօտենում էր գիւղին, ուր նրան ճանաչում էին, մի տեսակ անհանգստութիւն տիրում էր նրան: Կենդանի են արդեօք այն անձինքը, որոնց հետ նա մտերմացել էր քսան և վեց տարի առաջ: Շատերը նրանցից անկասկած անհետացել են: Տարիքով

մարդիկ հասած կը լինեն խորը ծերութեան, երեխայք ու պատանիներ արդէն հասակն առանց նրան չեն լիշիւ: Գուցէ շատերն էլ տեղափոխուել են գիւղից մի այլ տեղ, որ ընդունուած է այժմ շատ տեղերում շնորհիւ երկրի անբերութեան և հողի պակասութեան: Այս հարցերը բուռն կերպիւ հետաքրքրում էին նրան և այս պատճառով դրանց բացատրութեան համար վճռեց զի մեկ սայլապանին: Այս մարդը տանելով ու բերելով ճանապարհորդներին քաղաքից մերձակայ գիւղերը, երևի ծանօթ կլինի երկրի հանգամանքներին: Նրանք արդէն հասել էին զառիվայրի գլուխը և առջևից բացուած էր հարթ ճանապարհը: Դաւթեանցը նստեց սայլն և զի մեկ սայլապանին:

— Այ տղայ, ծանօթ ես Ծաղկաբնի բնակիչներին:

— Ոնց ծանօթ չեմ, աղա, տարին տասներկու ամիս տանում բերում եմ խալիին:

— Գասպար իւզբաշին էլի կենճում է:

— Էհ, աղա, ձեր չարը տարաւ:

Դաւթեանցի գլխին կարծես սառը ջուր ածեցին: Ուրեմն չկայ այն մարդը, որ այդ գիւղի աղն էր: Նա մտքով ողորմի ուղարկեց նրա հոգուն:

— Փիս ժամանակ էր, աղա, էն տարին, շարունակեց սայլապանը, խօլէրի տարին էր... խալիսը ճանճի պէս էր կոտորուում... մէնակ Գասպար իւզբաշու խիզանից չորս հոգի մեռան:

— Ափսոս, բացականչեց Դաւթեանը:

— Իսպառ նահատակ եղաւ... շատ փայ գեղիցը փախաւ. նա մէնակ իր խիզանով պտիտ էր գալիս հիւանդներին գլխով. իրանք էլ զոհ եղան... ափսոս, հազար ափսոս մարդ, խորը հոգոց հանելով վերջացրեց սայլապանը և մտրակեց ձիաներին:

«Միշտ իւր մարդասիրական զգացմունքով՝ մտմը»

տաց Դաւթեանը: Զիւնները օթեւանի մօտաւորութիւնն զգալով, սկսեցին աւելի աշխոյժով սլանալ: Դաւթեանը լուռ էր. սալլակը սլանում էր անտառների արանքում. տեղ տեղ երևում էին մշակած հողեր: Դաւթեանին շատ էր զբաղեցնում այժմ այն հանգամանքը, թէ ո՛ւմ տանը պէտք է պատասխարուի այս մի քանի օրուայ ընթացքում: Թէև նրան պարտաւոր են ամենայարմար բնակարան տալ, սակայն ծանօթների մէջ ապրելը այլ է, քան անծանօթների մօտ: Գուցէ գիւղի մէջ շատերը նրան չեն ճանաչում, ինքն էլ նոր սերունդից շատերին չի ճանաչիլ... Այս տեսակ մտքերով էր զբաղուած Դաւթեանը, երբ հեռուից երևեցան Ծաղկաբնի խրճիթներն անտառի տակ, իբրև ձուկներ բնի խորքում: Տեղ տեղ փոքրիկ գետակը խոխոջում էր արտերի միջով, իսկ եկեղեցու ոսկեձուլ խաչը արևի շառաւիղներից փալփուում էր: Հնաշէն կամուրջը միացնում էր գետակի երկու ափը, որի մի կողմումն էր գետեղուած Ծաղկաբունը: Զրաղացի մօտ գետակը փրփրում էր, ուղարկելով խոնջացած Դաւթեանին իւր գովութիւնը: Վերատեսչի աչքերի առաջ պարզապէս պատկերացան անցած գնացած օրերը. . .

Սալլակը կանգնեց փոքրիկ տնակի առաջ:

— Նոր իւզբաշու տունը սա է, ասաց սալլապանը, կանգնացնելով ձիաները:

Դաւթեանը կարծես քնից նոր արթնացած, սկսեց գիտել ցոյց տուած տունը: Այսպիսի մի տուն գիւղի մէջ նրան ծանօթ չէր: Մինչ այդ տնակի շէմքին երևեցաւ մի փոքրահասակ մարդ, նիհար ու տժգոյն երեսով: Սա էր գիւղի տանուտէրը, որ վաղօրօք նախապատրաստուած էր վերատեսչի գալու մասին: Նա օգնեց Դաւթեանին սալլից իջնելու: Շալակելով վերատեսչի իրերը, առաջնորդեց նրան ներս, մի բաւական ընդարձակ և մաքուր

սենեակ, կահաւորած շինական տարազով: Պատի երկայնութեամբ սարքած էր թախտը, որի վրայ փռած էր կապերտ. թախտի երկու ծայրին դարսած էին չթէ երեսով մութաքաներ: Պատուհանի առաջ դրած էր մի հասարակ սեղան և մի աթոռ: Սենեակի պատուհաններից մէկը դէպի դուրս էր նայում փողոց, իսկ միւսը դէպի փոքրիկ պարտէզ, որ անմիջապէս միանում էր անտառի հետ:

Դաւթեանը լուացուելով և թեթեւացնելով իրան ճանապարհի թողից, հանոտեց պալուսակից իւր իրերը: Այդ միջոցին ծառան ներս բերեց մի մեծ ափսէի վրայ դարսած զանազան խորտիկներ: Առաւօտեանից ոչինչ չկերած Դաւթեանցը մեծ ախորժակով սկսեց խոտել: Ծառը հազիւ վերջացրած, մտաւ նրա սենեակը քանտապահը: Սա շնորհաւորելով վերատեսչի ողջ ու առողջ ժամանելը, վախից թէ պատկառանքից սկսեց անկապ խօսել ու պատասխանել: Դաւթեանի աշխատանքը նրան հանգստացնելու համար իզուր եղաւ և նա կարճ կտրելով ճանապարհ դրեց նրան, տալով զանազան պատուէրներ միւս օրուայ համար և ժամադիր եղաւ նրա հետ անտառ գնալու: Յետոյ ինքն էլ դուրս գնաց զբօսնելու: Մի ժամի չափ նա շրջագայում էր գետակի երկայնութեամբ, ականջ դնելով ջրի խոխոջին, որ մի ժամանակ այնքան սիրելի էր նրան իւր պանդխտութեան օրերին: Երեկոյեան զովը ստիպեց շտապելու իւր բնակարանը: Հենց որ տուն մտաւ, փակեց պատուհանները և սկսեց մտածել տիկին Աշխարհեգեանի դղեակի մասին, որ հեռու չէր այնտեղից և ուր չեթէ ուղենար հենց միւս օրը կարող էր գնալ: Այս միտքը նրան մի փոքր ուրախացրեց և հանուելով պարկեց թախտի վրայ սարքած մաքուր անկողնի մէջ:

Դ.

Դաւթեանը ճշտապահ էր: Նշանակած ժամին անտառապահի և մի քանի պահապանների ուղեկցութեամբ նա դիտում էր անտառի այն մասը, որ պէտք է մասնատուէր բնակիչներին: Մայիսի վերջին օրերին մի այնպիսի եղանակ է, երբ անտառը իւր կատարեալ փառքին է հասնում, օրն էլ սքանչելի է զբօսնելու համար:

Մի թեթև քամի ցամաքեցրել էր ուղին. ճանապարհի երկու կողմում ծաղիկներն առատապէս ծաղկում էին, թռչունները երգում էին: Դաւթեանի ուրախութեանը չտի չկար, տեսնելով անտառում այդքան բազմաթիւ կանաչ սաղարթ և գոյն զգոյն ծաղիկներ: Նա շնչում էր ծաղկանց անուշ բուրմունքը: Դպրոցի շակերտի նման ազատ կերպիւ շրջագայում էր արդէն ծանօթ ուղիներով: Բնութիւնը պարզւել էր նրան հիանալի լիշողութիւն տեղի դրութեան մասին և այդ նրա առանձնաշնորհը զարմացնում էր անտառապահին ամենայն ժամանակ, երբ նա ցոյց էր տալիս գնացած ճանապարհը և նրա ուղղութիւնը:

Հետզհետէ քանի մտնում էին անտառի խորքը, այնքան Դաւթեանին թւում էր, թէ իւրաքանչիւր քայլ պակասացնում էր նրա հասակից մի տարի և թէ նրա երիտասարդութիւնը նորոգւում է հաճարի ծառի սաղարթի նման: Այն ինչ այն օրից, երբ սա հրաժեշտ էր տուել այս տեղերին, անցել էր մի քառորդ դար և ոչ պակաս:

Դիտելով անտառը նա համոզուեց, որ տ. Աշխարբէգեանը արդար է և թէ անտառի այն մասը, որ վարչութիւնը մտադիր էր մասնատրել ժողովրդի գործածութեան համար, բոլորովին անպէտք ու անօգուտ է: Այդ մասը միանում էր գիւղի հետ մի հին ճանապար-

հով, որ շատ տեղերում փորփորուած էր սալլի անիւններից և երբեմն ծուռում էր դէպի կտրատելու որոշուած անտառը: Ստորերկրեայ աղբիւրներ խոնաւացրել էին գետինը, կազմելով ճահիճներ, ուր կնիւն ու պրտուն շամբեր էին կազմում, բայց և այնպէս անպէտք են ճարակելու տաւարի համար: Բուսականութիւնը ամեն ուրեք յարմարուել էր վատ գետնի յատկութեանը: Տեղի անյարմարութիւնը ազդել էր և այն անտառի վրայ, որ կտրատելու էր որոշուած՝ այս ու այնտեղ ծուռած ու մամուսպատ կաղնիներ գալարում էին իրանց ճիւղերը, որոնք մասամբ միայն ծածկուած էին շատ նուազ ու վտիտ տերևներով: Պարզ էր, որ տեղական անտառային վարչութիւնը դրդած շահագիտութեան եռանդից աշխատում է ազատել իրան այդ տեղից, նշանակելով այն ժողովրդի գործածութեան համար: Վերատեսուչը համոզուեց, որ իւր ընկեր Բարամեանցի առաջարկութիւնը թէ անարդար էր և թէ անկարգ: Դրանով նա միայն ուզում էր ցոյց տալ աստիճանաւորին յատուկ հաճոյանալու եռանդը: Ընկերոջ այս վարմունքը Դաւթեանցին շատ տգեղ թուեցաւ և նա ուղղեց իւր քայլերն անտառի հակառակ կողմը, ուր գետինը ամուր էր և հարուստ ճոխ բուսականութեամբ: Աճարին ու կաղնին բուսնում էին խիտ ու առողջակազմ, տարածելով օդի մէջ իրանց փարթամ ճիւղերը, խիտ տերևները: Այս անտառամասի մէջ փոփոխակի պատահում էին ծառերի և այլ տեսակներ: Բաց տեղերում խիտ ու սննդարար խոտը ներկայացնում էր առատ արօտ, մանաւանդ որ այդ տեղից մի գեղեցիկ շաւիղ քերելով բլրակի կատարը, իջնում էր հարթ զառիվայրով դէպի գիւղը: Յամենայն դէպս այս անտառամասը կարող էր բաւարար լինել ժողովրդի կարեաց համար, չմեղանչելով արքունիքի օգտի դէմ: Դաւթեանցը եկաւ այն եզրակացութեան, որ ահա այս տեղը

պէտք է որոշել ժողովրդի գործածութեան համար: Նա հաւատացած էր, որ նրա այս մտադրութիւնը ընդունելի կլինի վարչութեան համար և շտապեց այս ուրախառիթ լուրը հաղորդել տ. Աշխարհեզեանին: Այս միտքը նրան լիջեցրեց սքանչելի տիկնոջ հրաւերը նրան այցելելու մասին: Հենց այս միջոցին էլ նա իւր ուղեկիցներով գտնուում էր մի լայն անտառային ծաղկաւէտ հրապարակի վրայ, որտեղից երևում էր մի շինութեան կտուր:

— Այս չէ՞ տ. Աշխարհեզեանի դղեակը, հարցրեց Դաւթեանցը պահպանին:

— Այո՛, պարոն, հէնց այդ ուղին տանում է դէպի նրա տունը:

Դղեակի երևալը հէնց այդ միջոցին, երբ նա մտածում էր տ. Աշխարհեզեանի մասին, Դաւթեանի վրայ քաղցր տպաւորութիւն գործեց: Այս զուգադիպութիւնը բոլորովին փոխեց նրա նախազիծը: Դուրս գալով Ծաղկաբնից նա ամենեւին չէր մտածում այցելել տիկնոջ. նա աւելի ուշ էր ուզում նրան ներկայանալ: Սակայն դղեակին մօտ լինելը նրա վրայ ուրիշ կերպ ազդեց և վճռականապէս փոխեց նրա որոշումը: Նա մի հայեացք ձգեց իւր հագուստի վրայ. կօշիկներն, իրաւ, թողոտ էին, բայց բաճկոնն ու անդրավարտիկը այնքան էլ վընասուած չէին անտառում երկար ժամանակ թափառելուց, մի խօսքով ամեն ինչ կարգին էր: Նա իսկոյն արձակեց իւր ուղեկիցներին և դիմեց դէպի դղեակը: Քառորդ ժամից յետոյ նա հասաւ անտառի ծայրին և տեսաւ իւր առաջը մի պարտէզ և նրա մէջ տեղը մի շինութիւն:

Թէև տեղացիք այդ շինութիւնը դղեակ էին անուանում, բայց դա մի հասարակ տուն էր: Ամենից աւելի աչքի էր ընկնում պարտէզը, որ մեծ խնամքով էր պահուած:

Ձանազան ծաղիկների մարգեր յաջորդում էին միմեանց,
տարածելով իրանց չորս կողմը անուշահոտութիւն: Առ
հասարակ այդ բնակարանը գրաւում էր իւր հիւրասիր-
ութեամբ և Դաւթեանը գոհ մնաց, որ վճռեց այսօր
Լեթ այցելել:

Մի քանի ընկերացիներ չէին մտնուցուցաւ տան գլխաւոր
մուտքին և պարտիզպանի ուղեկցութեամբ հասաւ պա-
տշգամբին, ուր կանգնած էր աղախինը: Այս վերջինը
իմաց տուաւ տանտիկնոջ հիւրի մասին:

— Ա՛խ, պարոն, որքան բարի էք... համեցէք, ու-
րախ եմ որ խօսքներդ կատարեցիք: Տ. Աշխարբէգեանը
իրան յատուկ աշխուժութեամբ ուրախ ուրախ մեկնեց նը-
րան իւր ձեռքը: Դաւթեանը խոնարհութեամբ սեղմեց ա-
րևից թխացած տիկնոջ փոքրիկ ձեռքը և ներողութիւն
խնդրեց իւր հագուստի անյարմարութեան համար:

— Այս ընկերացի թափառում էի անտառում և գլխա-
նուէլով ձեր դղեակին մօտ, վստահացայ գալ ձեզ այ-
ցելութիւն և յայտնել յարգանացս հաւաստիքը:

Հէնց որ Դաւթեանը վերջացրեց իւր հաճոյախօ-
սութիւնը, սենեակի խորքում նկատեց մի ուրիշ այ-
ցելու, որ տեղից վեր կացաւ:

Սա միջահասակ մի երիտասարդ էր ամուր կազ-
մուածքով: Թխագէմ, թուխ խուճուճ մօրուքով. այդ
տղան կարծես շշկլուել էր օտար մարդու երևալուց:
Նա կանգնած էր բազկաթոռի ետևը, գլխարկը ձեռքին և
սպասում էր թէ երբ պէտք է նորեկը վերջացնէ խօսելը,
որ հրաժեշտ տայ տ. Աշխարբէգեանին: Մի հայեացքով
այդ տղայի լուրջ և խորհող երեսը աւելացնում էր նրա
տարիքը. բայց ուշի ուշով քննելով նրան, կարելի էր
նրա աչքերից նկատել երիտասարդական աշխուժութիւն
ու եռանդ: Այն ընկերացիներ, երբ Դաւթեանը դարձրեց ե-

րեսը նրա կողմ, երիտասարդը մօտեցաւ և մի տեսակ կոպտութեամբ ասաց՝

— Յտեսութիւն, տիկին, պէտք է անտառը գնամ:

— Ի ուրք կը վերադառնաք, բացականչեց տ. Աշխարհէգեանը, ես ձեզ չեմ արձակում... պարոն, շարունակեց նա դառնալով վերատեսչին, երբ դուք բարեհաճել էք գալ այստեղ, ես ձեզ առանց այլևայլութեան ճաշի կը պահեմ: Գիւղում այսպէս է սովորութիւնը: Մանաւանդ որ դուք ուղեկից կունենաք մինչև գիւղը, որովհետև պարոն Արշակը անտառ գնալուց առաջ խօսք կը տայ մեզ հետ ճաշելու: Ա՛խ, ընդմիջեց նա, ծիծաղելով, որքան շփոթուած եմ, մոռացայ ձեզ նրան ծանօթացնելու... պ. Արշակ Իւզբաշեանց... պ. Դաւթեանց, անտառապահութեան գլխաւոր վերատեսուչ...

Երկուսն էլ հանդիսաւոր կերպով միմեանց գլուխ տուին: Դաւթեանցը զարմացաւ երիտասարդի ազգանունը լսելով. նա յառեց իւր աչքերն երիտասարդի երեսին, բայց սա արդէն դիմեց գէպի դուռը, իսկ սքանչելի այրին նրան ճանապարհ գցելով, կրկնում էր՝

— Կը սպասեմ ձեզ... անպատճառ կը սպասեմ:

Երբ Արշակը անյայտացաւ՝ Դաւթեանը հարցրեց.

— Ձինք՞ այդ պ. Իւզբաշեանցը իմ վաղեմի բարեկամ, գիւղի տանուտէր Դասպարի տղան է:

— Այո՛, դա ձեզ զարմացնում է... բարեբաղտաբար դա ազատ մնաց այն սարսափելի հիւանդութիւնից... մի բարեսիրտ և անուղակի մարդ է... դա սրտով կը պաճ է իւր գիւղին և կամենում նրան օգտաւէտ լինել... փառաւորապէս աւարտելով երկրագործական դըպրոցի դասընթացը, նա վերադարձաւ գիւղը և վերաւորանք չլինի ձեզ համար, անտառազիտութեան մասնագիտութեան մէջ ձեր շատ անտառապետներին գերազանցում է:

Լևոն Դաւթեանցը սկսեց ծիծաղել...

— Գրազ եմ գալիս, տիկին, որ դա է ձեր խորհրդատուն ներկայ վեճի մէջ:

— Դուք իրաւ գուշակեցիք... Ահա երկու տարի է ինչ պ. Արշակը վերագործել է գիւղը, այդ օրից նա առաջարկեց տեղացիներին իւր ծառայութիւնը և մենք մեր գործերը նրան յանձնեցինք լիակատար հաւատարմութեամբ, այս իսկ պատճառով ես միշտ խորհրդակցում եմ դրա հետ: Դա ինձ շատ է հետաքրքրում: Եթէ դրութիւնս ինձ չստիպէր աւելի զգոյշ լինելու, ես մեծ ուրախութեամբ աւելի յաճախ կընդունէի նրան ինձ մօտ, բայց ինքն էլ շատ զգոյշ է և գալիս է այստեղ միայն գործի մասին խօսելու: Ես շատ ուրախ եմ, պարոն, որ դուք այնքան բարի եղաք, որ ընդունեցիք իմ հրաւերը. այս հանգամանքը թոյլ տուաւ ինձ պ. Արշակին էլ ճաշի պահելու...

Մինչդեռ Դաւթեանցը ինքն իրան մտածում էր որ լաւ կը համարէր երես առ երես ճաշել այրի կնոջ հետ, այս վերջինը բացեց դուռը և ցոյց տալով հիւրին պարտէզը, ասաց՝

— Գուցէ կը հաճիք մի փոքր պտոյտ անել պարտիզիս մէջ... բայց նախ և առաջ ներեցէք, մի քանի բոպէ միայն...

Այս ասելով, նա կանչեց աղախներին և, շտապով հրամաններ տալուց լետոյ, ծածկեց գլխին յարգեալ կըլորակ գլխարկը և վերատեսչի հետ դուրս գնաց պատշգամբ:

— Ձէք նկատում, սկսեց տիկինը, որ դղեակս այն օրից, երբ դուք վերջին անգամ տեսել էք, ծաղկել է.. Հանգուցեալ պապիս ժամանակ սա գորտերի բուն էր. գետակը ողողում էր ստորին մասերը, մարգագետնի մեծ մասը ծառերով էր ծածկուած... իմ հոգացողութեամբ

այս բոլորը կարգի բերուեցաւ և այժմ ինչ որ դուք տեսնում էք, բոլորը իմ ձեռքով է կարգի դրուած:

Տիկինը իրան յատուկ աշխուժութեամբ պտոյտ էր ածում իւր հիւրին ծառուղիներէ միջով, ցոյց էր տալիս նրան պէս պէս ծաղիկներ, բացատրում էր նրանց մշակութիւնը: Դաւթեանցը լսում էր նրա շատախօսութիւնը և սքանչանում նրա միւսնոյն ժամանակ գործնական և տեսական խելքի վերայ: Այսպէս շրջագայելով պարտիզի մէջ, տիկինը թռչնակի պէս 'ծլվլալով անցնում էր մէկ առարկայից միւսը: Մերթ գիտնականին յատուկ ոճով դասախօսում էր այս կամ այն ծաղիկի կամ ծառի ընտելացնելու մասին, մերթ երկչոտ ակնարկութեամբ վստահանում էր խօսք գցել անտառի բաժանման մասին. մերթ նրա լեզուն բացւում էր և նա միամտաբար պատմում էր իւր և ամուսնու մասին, իւր կռիւր գղեակի մէջ վերաբնակելու կամ իւր նախազիծը սրան զարդարելու մասին: Դաւթեանցը լցուած խնդութեամբ, որ տիկինը նրան հաւատ է ընծայում, պատմելով նրան ընտանեկան գաղտնիքներ, հետզհետէ հալւում էր ու զուարճանում: Յանկարծ տիկինը կանգ առաւ.

— Հաւատացած եմ, պարոն, ասաց նա, որ շատախօսութիւնս ձեզ ձանձրացրեց:

— Սխալւում էք, տիկին, պատասխանեց նա ոգևորուած... այն՝ ինչ դուք ասում էք, ինձ շատ է հետաքրքրում... պատմելով ինձ ձեր և ձեր զբաղմունքի մասին, ծանօթացնելով ինձ ձեր կեանքին, դուք դրանով ցոյց էք տալիս դէպի ինձ ձեր հաւատարմութիւնը, որից ես շատ զգացուած եմ:

Իրաւ նա շատ զգացուած էր, աւելի քան թէ ինքը կարող էր երևակայել: Տիկնոջ անկեղծ բնաւորութիւնը, նրա սիրտը, որ անչափ վստահութեամբ բաց

ւում էր, նրա պայծառ աչքերը, որ ժպտում էին, այդ մտերմական խօսակցութիւնը պարտէզում ծաղկանց մէջ նրան թմրեցրին, որովհետեւ մարդս լիսուն տարեկան հասակում, չսովորած և չընտելացած այդպիսի հանգամանքներին, իրաւ որ պէտք է թմրի:

— Այո՛, ասաց Դաւթեանցը զգացուած ձայնով, չընայելով որ մենք միայն նոր ենք ծանօթացել, այնուամենայնիւ դուք խօսում էք ինձ հետ իբրև հին բարեկամի, որի համար ես շատ և շատ շնորհակալ եմ...

Մի թեթեւ կարմրութիւն ծածկեց տ. Աշխարհէ-գեանի այտերը:

— Աստուած իմ, ասաց տիկինը, գուցէ ես սահմանից անցայ: Այդ իմ մշտական յանցանքն է... բայց առաջին խօսքից յետոյ, որ մենք ունեցանք Բարամեանցի տանը, ես ինձ ազատ զգացի ձեզ հետ: Բացատրեցէք ինձ թէ ինչու համար մի տեսակ մարդիկ մեզ քաշում են և մեզ անմիջապէս շատախօս դարձնում... Մի հայեացքով դուք ինձ երևացիք ծանրաբարոյ և ծածկամիտ, սակայն ես, որ մի վայրենի էակ եմ, ձեզանից չվախեցայ: Զեր հայեացքի մէջ կայ մի բան, որ ինձ վստահութիւն ներշնչեց և քաջալերեց: Ինձ ու ինձ ես ասացի՝ ահա մի ուղղամիտ, ծանրաբարոյ և օրինական մարդ. ես սրան կարող եմ հաւատալ...

— Այնչափ, որչափ էլ հաւատում էք պ. Արշակ Իւզբաշեանցին, ընդմիջեց Դաւթեանցը հեգնօրէն:

— Դուք ծիծաղում էք... Ուրեմն ես ձեզ կասեմ որ պ. Արշակը բարոյապէս շատ է նման ձեզ...

Դաւթեանցը լռեց: Նրանք սկսեցին նորից շրջագայել և որովհետեւ այստեղից արդէն ճանապարհը փոքր ինչ զառիվայր էր, Դաւթեանցը վստահացաւ առաջարկել տիկնոջ իւր թեւը: Այսպէս ման գալով, եկան մինչև տուն: Պատշգամբի վրայ Արշակ Իւզբաշեանցը նը-

րանց սպասում էր:

Արշակը, տեսնելով տիկնոջ Դաւթեանցի հետ թե թեկի տուած, խոր խոցուեցաւ: Նրա երեսը կարմրեց. նա կոպտութեամբ գլուխ տուեց վերատեսչին: Նրանք անցան սեղանատուն և նստեցին: Երկու տղամարդիկ միմեանց դիտում էին առանց ձայն ծպտուն հանելու. սակայն այդ ախորժելի չէր տ. Աշխարհէգեանին, որ ընդհակառակն աշխատում էր ամեն կերպ միութիւն ստեղծել երկու հիւրերի մէջ: Նա ստիպուեցաւ Արշակին խօսեցնել այն առարկայի մասին, որ նրան աւելի հաճելի էր: Նա գովեց նրա սէրը դէպի շինական գործերը, հարց ու փորձ էր անում երկրագործական զբաղմունքների և նրա ապագայ նախագծերի մասին: Երիտասարդ տղան պատասխանում էր պարզ ու կարճ: Երբ նա խօսում էր երկրագործական կամ անտառապահութեան տնտեսութեան մասին, երևում էր, որ խորը թափանցել էր իւր մասնագիտութեան մէջ: Խօսակցութեան միջոցին երբեմն նա շօշափում էր գիտնական հարցեր և նրանց մասին վիճաբանելով ցոյց էր տալիս հաստատ ու բազմակողմանի կրթութիւն: Դաւթեանը նրան հակառակելով և նեղը գցելով, հիացած էր մնում նրա պարզ ու ուղղամիտ պատասխանների վերայ, որի համար և արժանացաւ տ. Աշխարհէգեանցի գովասանքին: Արշակի խօսքերի մէջ հնչում էին եւ սրտի ջերմութիւն եւ վստահութիւն դատողութեանց մէջ եւ մեծահոգութիւն: Գիւղում ծնուած ու սնուած երիտասարդի այդ խոհականութիւնը իրաւ որ արժանի էր ուշադրութեան: Քանի աւելի նա պարզում էր իւր միտքը, որ յաճախ հակառակ էին Դաւթեանցի աշխարհայեցողութեան, այնքան աւելի գրաւիչ էր նա: Մի բան, որ Դաւթեանցի ուշադրութիւնից չվրիպեց, այդ այն էր, որ այդ տղայի ըստ երևութին կոպիտ ու բիրտ ձայնը

քնքշանում էր ու քաղցրանում, երբ նա ուղղում էր իւր պատասխանները տ. Աշխարհէգեանի հարցերին:

Դաւթեանցը լսելով նրա խօսակցութիւնը, նրա խոհական դատողութիւնները, բազմիցս ինքն իրան ասում էր. «ահա մի տղայ, որպիսին ես կը կամենայի ունենալ»: Այս ներքին ձայնին իսկոյն հետեւում էր և մի ուրիշը. «այնուամենայնիւ իմ հասակումս կարելի է էլի լուսալ ունենալ երեխայ. — պակաս է միայն կինը, որ հեռու չէ և որի հետ ամենայն ուրախութեամբ կամուսնանայի»: Նա դարձրեց իւր աչքերը դէպի տ. Աշխարհէգեանը: Նա ասում էր ինքն իրան, որ տիկինը իւր քսան և եօթ տարեկան հասակով ամփոփում է իւր մէջ բնածին խելք և ազնիւ սիրտ, լուրջ դատողութիւն և բաւարար զգացողութիւն, թէ նա միեւնոյն ժամանակ կարող է լինել և լաւ տանտիկին և շատ ցանկալի ընկերակից: Եւ իբր շարունակութիւն իւր մենախօսութեան նա թեքուեց քնքշութեամբ դէպի իւր հարևան տիկինը, շուայելով ամենամեղմ հաճոյքներ, որպիսիք երիտասարդութեան ժամանակից էլ կտտարած չէր: Յոյց տալով իւր այս մեծարանքը դէպի տիկինը, նա չէր նկատում թէ որպիսի վիշտ է յարուցանում Արշակ Իւզբաշեանցի սրտի մէջ և թէ ինչպէս նրա հոգևոյ տրամադրութիւնը հետզհետէ դժկամակում էր:

Սեղանից վեր կենալով, նրանք անցան պատշգամբը. Դաւթեանցը հրաժեշտ տուեց տիկնոջ միայն այն ժամանակ, երբ արդէն բաւական մթնել էր և լուսինը սկսել էր բարձրանալ ծառերի ետևից: Վերկացաւ հրաժեշտ տալու և Արշակը:

— Բարի գիշեր, պարոններ, ասաց տ. Աշխարհէգեանը, դուք միասին կերթաք... պ. Դաւթեան, որովհետև դուք էլի մնալու էք մի շաբաթ մեր տեղերում, չմոռանաք դղեակիս ճանապարհը:

Դուրս գալով պարտիզից երկուսն էլ գնում էին լուռ, ծառերի միջով: Դաւթեանցն առաջինը խզեց այդ լուսթիւնը.

— Պարոն Իւզբաշեանց, ես դիտեմ, որ դուք այն վարչութեան հակառակորդ էք, որի ներկայացուցիչը ես եմ... բայց որովհետեւ ես մի ժամանակ ձեր տան մտերիմ բարեկամ եմ եղել և շատ անգամ վայելել ձերոնց աղ ու հացը, ես ոչինչ պատճառ չեմ տեսնում, որ մենք միմեանց թշնամաբար վերաբերուենք: Համոզուած եղէք, որ ես իմ կողմից շատ խաղաղասէր եմ և եթէ ձեր պահանջը ինձ հիմնաւոր երևայ...

— Այո՛, հիմնաւոր են, պարոն, ընդհատեց Արշակը նոյն կոպտութեամբ. միայն երկրիս անձանօթ ու օտար մարդիկ և նրանց պահանջներին անտեղեակները կարող են այդ չիմանալ:

— Սպասեցէք... ես այնքան էլ օտար ու անձանօթ չեմ երկրին, ինչպէս դուք կարծում էք... ես այստեղ ապրել եմ նախ քան ձեր աշխարհ գալը և ինչպէս ասացի ձեր տան մտերիմն եմ եղել... քանի տարեկան էք դուք, լանկարծ հարցրեց Դաւթեանցը, կանգնելով նրա առաջ:

— Քսան և վեց տարիս շուտով կը լրանայ...

— Քսան և չորս տարի առաջ ուրեմն ես եղել եմ Ծաղկաբնում անտառապետի օգնականի պաշտօնով:

— Մի՛թէ, սառնութեամբ ասաց Արշակը:

Նրանք շարունակեցին ճանապարհը:

— Այո, պարոն, նորից սկսեց Դաւթեանը, սրանից դուք կարող էք եզրակացնել, որ ես օտար չեմ այս երկրին և թէ այս տեղերը ես հազար ու մի անգամ չափչփել եմ ու ուսումնասիրել...

— Ուրեմն, պարոն, եթէ դուք արդար մարդ էք, պէտք է փոխէք բաժանման նախագիծը: Վարչութեան

առաջարկութիւնը միանգամայն անընդունելի է. նրա
առաջարկածը մեզ վնաս է պատճառում ու քանդում:

Ձեր շահերը արժանի են յարգանաց, սակայն մեր
անտառն էլ ունի իրաւունքներ, որ պէտք է նկատի
առնուին... Մեր պարտականութիւնն է նրան պահպա-
նել և եթէ դուք ինչ պէս հին անտառապետ լինէիք...

— Պաշտօնապէս անտառապետ չլինելով էլ, բացա-
կանչեց Արշակը, կարելի է սիրել անտառը. դուք և ձեզ-
պէսները նրան գնահատում էք նրա համար, որ գան-
ձարանի համար շատ փող ստանաք, իսկ մենք... մենք
նրան սիրում ենք այնպէս, ինչպէս որ նա է...

— Դուք ծառեր սիրում էք, հարցրեց Դաւթեանը
քնքշութեամբ:

— Սիրում եմ ու այնպէս... պատասխանեց երիտա-
սարդը ոգևորուած: Ես նրանց սիրում եմ իբրև մի բա-
րեկամ, որոնց հետ մեծացել եմ, սիրում եմ ինչպէս
իմ տունը, ինչպէս հայրենիքս, որին նրանք այնչափ
գեղեցկացնում են... Աչքի առաջ ունեցէք միայն այն
հանգամանքը, որ ես համարեա թէ ծնուած եմ անտառի
մէջ և երեխայութեանս հասակից ապրել եմ նրանց
մէջ... Մի գեղեցիկ ծառ, ինչպիսին որ սա է...

Այս ասելով, նա շտապով դիմեց անտառի փին
կանգնած հաճարի ծառին և գրկեց եռանդով նրա
հարթ, արծաթափայլ ու յաղթանդամ բունը:

— Մի առողջ և պնդակազմ հաճարի ծառ, շարու-
նակեց նա, որին եղբօր պէս եմ սիրում և որ շարժում
է իմ մէջ ամենաջերմ զգացմունքներ:

Դաւթեանը հիացած մնաց երիտասարդ տղայի
այդ յափշտակութեան վրայ, որ բռնազբօս բղխում էր
իբրև կենսունակ ջուր: Յուզուած սկսեց նայել այդ
առողջակազմ երիտասարդի վրայ, որի աչքերը փայլում
էին լուսնի լուսով:

—Ահա մի կէտ, ասաց Դաւթեանցը ժպտալով, որ մեզ կարող է հաշտեցնել... Իրաւաբանական տեսակէտից մենք կը կռուենք քաղաքավարի գէնքով... Բայց մինչ այդ թող զինադուլ լինենք... կամենում էք...

Նա ձեռքը մեկնեց երիտասարդ տղային: Սա, մի փոքր տատանմունքից յետոյ, մեկնեց իրանն էլ, որ Դաւթեանցը բարեկամաբար սեղմեց: Նրանք այնուհետեւ շարունակեցին իրանց ճանապարհը և հասնելով գիւղը բոժանուեցան:

Դաւթեանցը մտաւ իւր սենեակը: Նա այնչափ գրգռուած էր, որ քուն չէր գալիս նրա աչքերին: Նա բաց արեց պատուհանը և ընկաւ խոր մտածմունքի մէջ: Օրօրուած դաշտի ու անտառի գիշերային շշուկից, նա ընկաւ անըջային մոռացութեան մէջ: Արշակ Իւզբաշեանցն էր այժմ նրա մտածմունքի առարկան: Մի առ մի լիջեց ամբողջ օրուայ դէպքերը թէ տ. Աշխարհեզեանի տանը և թէ ճանապարհին նրա հետ ուղեկցութեան միջոցին: Նրան շատ էր զբաղեցնում այն միտքը, թէ արդեօք իւր վաղեմի բարեկամ Գասպար իւզբաշուհի տղէն է սա. չլինի թէ սա նա է, որին կնքահայրութիւն է արել... Այս մտքի հետ նա սարսափեց և խուսկոյն լիջեց տ. Աշխարհեզեանցին, որի ուշադրութիւնը առանձնապէս գրաւել էր այս երիտասարդը: Սակայն նա շուտով հեռացրեց իրանից այդ միտքը հաւատացած լինելով, որ իւր մկրտած տղան, ինչպէս և Գասպար իւզբաշու շատ ուրիշ զաւակներ զոհ գնացած կը լինին որ և է՛հիւանդութեան և եթէ դա լինէր՝ Արշակը չէր թագցնիլ նրանից:

է.

Դաւթեանցը միւս օր առաւօտեանից զբաղուեցաւ

դրելով վարչութեան մի զեկուցում, որի մէջ առաջադրում էր իւր քննութեան հետեւանքը: Մանրամասն քննելով մտադրուած անտառային բաժնի արժէքը, նա ապացուցեց որ հարկաւոր է ի նկատի առնել տեղացի-ցիների օրինական պահանջները և իւր կողմից առաջարկեց մի ուրիշ ծրագիր, խնդրելով դրական պատասխան, որպէս զի համայնքի ներկայացուցիչները մօտակայ ժողովում նա կարողանայ առաջարկել նրան այս նոր բաժանման հիմունքները: Նա շտապով առաջ էր տանում իւր գործը նախընթաց օրուայ թարմ տպաւորութեան տակ: Անգիտակցաբար նրա աչքի առաջ ներկայացաւ տ. Աշխարբէգեանի ժպտալից դէմքը և Արշակի համակրական անձնաւորութիւնը: Այդ երկու անձնաւորութեանց լիշատակը կարծես ներգործում էր նրա որոշմունքի վրայ: Նրա բերած փաստերը թէ ամփոփ էին և թէ համոզիչ: Նրա եզրակացութիւնները ճարտար էին, որ բոլորովին անսովոր էր վարչական թղթակցութեան ոճին և որին ինքը Գաւթեանցը այնքան էլ վարժուած չէր:

Բաց պատուհաններից առաւօտեան արևի պայծառ ճառագայթները ուրախ ներս էին թափանցում: Հեռուից լսում էր նոր զարթնող գիւղի աղմուկը: Այս բոլորը լցրեց Գաւթեանցի սիրտն ու հոգին ցնծութեամբ և բերկրութեամբ: Գործն արդէն վերջանալու վրայ էր, երբ նրա կեցած տան առաջ մի արտասովոր աղմուկ լսուեցաւ: Մի կայտառ ձի դոփում էր ու խըրխնջում. տղամարդու ձայնն աշխատում էր զսպել երիվարի անհամբերութիւնը, փաղաքշելով ու սիրալիր խօսքեր նրան շուրջելով: Գաւթեանը մօտեցաւ պատուհանին և տեսաւ դրսում կանգնած փոքրիկ սալակ և սալակում ձիու սանձը քաշող Արշակ Իւզբաշեանցին: Նա սպասում էր մէկին, որին պէտք է ուղեկցէր:

— Վերջապէս. . . անհամբերութեամբ ձայնեց Արշակը, նկատելով դիմացի տնից դուրս եկող մի բարձրահասակ մօտ յիսուն տարեկան մարդուն: Սրա հետ դուրս եկաւ տանից ամբողջ ընտանիքը:

Նորեկը ժպտալով պատասխանեց.

— Համբերութիւնը կեանք է, Արշակ և նրա կողքին՝ աւելացրեց, դեռ արևը հալա որտեղ է, Աստուծով լուսով կը վերադառնանք...

Արշակը մտրակեց ձին և սալակը սլացաւ և թագնուեց անտառի ետեւից:

— Բարի ճանապարհ, միաբերան գոչեցին և օդը թնդաց ամեն հասակի ձայներով:

Դաւթեանցը այս բոլորը նկատեց պատուհանից:

Սրանք բաղտաւոր են և սիրում են միմեանց, մրտածեց նա:

Դեռ երկար ժամանակ Դաւթեանցը կանգնած իւր տեղում դիտում էր ճանապարհ ընկնող ընտանիքի անդամներին: Մայրը փոքրերին մխիթարում էր՝ հօր շուտով վերադարձաւ նրանց խոստանալով. մեծ տղերքը գովաբանում էին Արշակի ձին ու հիանում նրա վրայ: Բայց այս երևոյթն էլ անհետացաւ և փողոցում նորից տիրեց լուռութիւն: Դաւթեանցը դեռ էլի կանգնած իւր տեղում մտածում էր: Սրան առ հասարակ զբաղեցնում էր Արշակը, որ ինչպէս նա տեսնում է ամբողջ գիւղի սիրելին է եղած: Եւ իրաւ չէր կարելի չսիրել այդ քաջառողջ տղամարդուն, որ իւր ամբողջ անձը, իւր ապագան ու երջանկութիւնը նուիրել էր իւր գիւղի և գիւղացիների բարօրութեանը: Այդ բարեկիրթ և խոհուն տղան կարող էր ստեղծել իւր համար մի ուրիշ և լայն ասպարէզ գործելու, սակայն դրան չեն զբաղեցնում աշխարհային ունայն ցնորքներ այնքան, որքան իւր համագիւղացիների բաղտաւոր և երջանիկ կեանքը:

Երևի այժմս էլ նա իւր առաջն առած տանում է իւր մերձաւորին քաղաք նրա որևէ գործը շտկելու ու կարգադրելու համար: Նոյն բարեմիտ ուղղութեամբն էր ղեկավարուում և նրա հանգուցեալ հայրը, որ սարսափելի վարակման միջոցին ուրիշների պէս գիւղից չբփախաւ, այլ ամբողջ ընտանիքով մնալով գիւղում վարակուողներին օգնութիւն էր հասցնում և վերջը ինքն էլ, կինն էլ և երկու առոյգ պատանի տղերքը զոհ եղան իրանց մարդասիրական վարմունքին: Բարեբաղտաբար Արշակը այդ ժամանակ գիւղումը չէր. նա դեռ ևս դպրոցում շարունակում էր իւր ուսումը. սա միայն զերծ մնաց վարակումից: Աստուած սրան խնայել է գիւղի համար. գիւղն էլ թէ սրա հազուագիւտ բնաւորութեան համար և թէ երախտագիտական զգացմունքից դրդած դէպի նրա անժամանակ կորած ընտանիքը, նուիրել է նրան ամբողջ իւր սէրը, այն սէրը, որ գիւղացին միայն կարող է տածել:

Այսպէս մտածելով, Ռաւթեանցը կրկին մօտեցաւ իւր սեղանին. նա նորից կարդաց իւր զեկուցումը, մի անգամ էլի աչք ձգեց քարտէզի վրայ և այդ բոլորը փաթեթի մէջ դրեց ու կնքեց: Ինքը գնաց շինական կառավարութեան ատեանը և խստիւ պատուիրեց իսկոյն և եթ տանել և յանձնել պոստատուն:

Վերադառնալով իւր բնակած տեղը, նստեց գուրսը տան առաջ դրած երկայն նստարանի վրայ: Գիւղացիք անցուդարձ էին անում, զբաղուած իրանց առօրեայ գործերով: Մեծ ու փոքր նրա մօտից անցնելով բարի օր էին նրան մաղթում ու հեռանում: Ռաւթեանցը չկորցրած դեռ ևս իւր մտածմանց թելը, ոմանց պատասխանում էր, ոմանց ողջոյնը անուշադիր թողնում: Կանայք՝ պառաւ թէ երիտասարդ, անցնելով նրա առաջ աւելի ամօթխածութեամբ ծածկում էին իրանց քիթ

ու պռուսները գլխին փաթաթած աղյուխով և հետաքրքիր աչքով դիտելով նրան, երեսը միւս կողմ շուռ տուած հեռանում էին: Ակամայ համեմատեց սրանց տ. Աշխարհէգեանցի հետ: Կրթութեան և լուսաւորութեան հետեւանքը նա արդէն նկատել էր Արշակի և սրա համադրողացիների վերաբերութեամբ. այժմ ահա նա համեմատում է նոյն տեսակէտից սրանց սքանչելի տիկնոջ հետ: Միթէ սրանց մէջ չկայ նոյն նագուկ հասակը, նոյն քնքոյշ և ժպտալից աչքերը, նոյն գեղանի դէմքը, որ ծածկուած է մարդու տեսութիւնից, շնորհիւ գլխի փաթաթանքի ու հագուստի տալ տարագի: Գիւղական տիպը, մանաւանդ քաղաքներից հեռու գիւղերի, գոված ու փառաբանուած է: Ծաղկաբունը պատկանում է այդ գիւղերի կարգին և հետեւաբար կեղծ քաղաքակրթութեան շնորհքը չէր կարող գեղծել այդ տիպը և պէտք է որ այստեղ անարատութեամբ փայլելիս լինէր: Սակայն նահապետական կարգ ու կանոնը նրանց ծածկում է հետաքրքիր անձանց տեսութիւնից և այդ կողմից նրանք բախտաւոր են ու երջանիկ: Նրանք ամուսնանում են, ընտանիքի տէր դառնում. մայրը սրբութեամբ կպած է իւր օջախին, անարատ վարում է իւր պարտականութիւնները թէ դէպի իւր ամուսինը և թէ դէպի զաւակները: Նոյնը պէտք է վայելէ ապագայում և Արշակ Իւզբաշեանցը: Գիւղի անձնուէր մշակը անշուշտ կորոնէ իւր լծակից գիւղի մէջ և նրան շատ դիւրին է գտնել մի անձն, որ գեղեցկութեան և շնորհքի հետ միացնէ ամուսնական նուիրական բարեմասնութիւններ: Այո՛, այդ դրան կլաջողի և ամենայն սրտով ցանկալի է որ նրա ապագան երջանիկ լինի:

Ճնշուած այս մտածմունքների տակ Դաւթեանցը վեր կացաւ ու գնաց շրջելու գետակի հոսանքի հակառակ կողմը: Մի տեղում գետակը հոսում էր խոր ու

նեղ դաշտի միջով, շրջապատուած ծառախմբերով: Տեղը ամալի էր. ուռենին, լաստենին ու քթթկենին ճոխացած այդ կուսական վայրում խիտ հովանի էին սքզուում իրանց չորս կողմը: Պատաղիճն ու տիկնատեռը խառնուել էին իրար անտեսանելի ջրից վեր, որ մեղմ կարկաչով հոսում էր նեղ տաշտի միջով: Այստեղ, այդ խուռ անկիւնում Դաւթեանցը առաջ էլ շատ անգամ անձնատուր էր եղած՝ իւր երիտասարդական մտածմունքներին: Ժամանակն այստեղ էլ կատարել էր իւր գործը, փոփոխելով ամեն ինչ բոլոր շրջակայքում: Թփերը ծառեր էին դարձել: Չորացած ճիւղերը՝ կտրուած ծառերից, քարեր՝ պոկուած ապառաժներից, խառն ի խուռն թափթըփած էին ու խափանում միակ փոքրիկ շաւիղը, որ տանում էր դէպի անտառ: Այս աւերականման պատկերը հնուժեան և տարիներից առաջացած քայքայումն էր ներկայացնում:

Ահա այս շաւղով էր նա վերադառնում տուն, երբ Իւզբաշի Գասպարը նրա առաջը կտրեց և համեստութեամբ և սրտի տրոփիւնով խնդրեց նրանից կնքահայրութիւն անել իւր նոր ծնուած զաւակին: Խնդիրը այնքան խոնարհ էր ու սրտանց, որ նա ամօթ համարեց մերժել և հայկական սովորութեամբ նա կապեց այդ տան հետ մեռոնի ազգակցութիւնը: Միակ անգամ այն Աստուածավախ ընտանիքից մնացել է Արշակը... Բայց միթէ սա է նրա սանիկը... Մկրտութեան օրը նա այնքան էր զիկուած և յուզուած նոր ստացած պաշտօնի պատճառով, որ մոռացաւ անգամ ինչ անուն տուին նրան և այնքան շուտ ու հապճէպ հրաժեշտ տուաւ նրանց նոր պաշտօնատեղը գնալու համար, որ անգամ չլիշեց թէ ինչպէս էին կանչում երեխային... նա մոլորուել էր այդ բռնազբօս մտածմունքներից: Բայց միևնոյն է, Արշակը թէ մի ուրիշն է եղել նրա

սանիկը. նա հիացած է այդ լուրջ ու խոհեմ երիտասարդի վրայ, որին այնքան յարգում է շնորհալի տ. Աշխարհեգեանը...

Զ.

Լևոն Իսախանը ուղարկելով վարչութեան իւր յայտարարութիւնը ընդգծել էր վրէժն «կարի յոյժ ստիպողական» խօսքը, ուստի յոյս ունէր փութով ստանալ իւր առաջարկութեան պատասխանը: Սակայն պատասխանը ուշանում էր և նրա հոգեկան տրամադրութիւնը խանգարւում: Նա փորձեց մի քանի անգամ գնալ Արշակ Իւղբաշեանցի մօտ խօսելու և իւր կաշկանդող մտածմունքները ցրուելու, սակայն սա ըստ երևոյթին խուսափում էր նրա հետ խօսելուց և ցանկութիւն չէր յայտնում նրա հետ որևէ յարաբերութիւն ունենալ:

Այս հանգամանքը նրան աւելի մեծ մտատանջութիւն պատճառեց: Նրան յուզում էր այն միտքը, թէ երիտասարդ տղան, որի վերաբերութեամբ նա այնքան քնքոյշ է եղած, այնքան սիրալիր, ինչո՞ւ պէտք է խուսափէ նրա ընկերակցութիւնից այդպիսի մի լետ ընկած տեղում, ուր որ նրանք երկուսն էլ զգում են միայնութիւն: Ոչ մի առիթ չկար, որ արդարացնէր նրա այդ վարմունքը: Ինչքէն ուրեմն վերագրել այդ ամենը:

Զբաղուած այս մտքերով նա որոշեց գնալ տ. Աշխարհեգեանի դղեակը, յուսալով գոնէ այնտեղ գտնել Արշակ Իւղբաշեանցին: Մի քանի ժամ չքնաղ այրումօտ լինելու ցանկութիւնը փոքր ինչ մեղմացրեց նրա այնպիսի սիրտը: Եթէ միայն կարողանար իւր մի փոքր ուշացած սիրտին մասնակից անել այդ տիկնոջ, որչափ բաղտաւոր կը լինէր: Միայն նա, այդ գեղանի տիկինը, կարող է նրան ընկերակից ու լծակից լինել և ուրիշ

ոչ ոք: Քանի առաջ էր գնում դէպի դղեակը, ա նքան աւելի ու աւելի անձնատուր էր լինում այդ մտքերին, օգային ամրոցներ էր կառուցանում իւր ապագայ երջանիկ կեանքի մասին. նա արդէն իրան երեւակայում էր գերդաստանի հայր ու վերջապէս հասած իւր բարօրութեան նաւահանգստին: «Գուցէ, մտածում էր նա, իմ տարիքում ամուսնանալը փոքր ինչ օտարոտի բան է, սակայն տիկինը իւր շնորհքով, իւր ուրախ ու զուարթ բնաւորութեամբ կը կենդանացնէ, ոյժ կը տայ այն մի քանի տարիներին, որ մնացել է ինձ ապրելու. նա չունի այն սնոտի ու կեղծ պչրանքները, որով հարուստ են կանայք մեծամեծ քաղաքներում. նա կըլինի կատարեալ կին, օրինակելի տանտիկին և ինքը որդի չունենալով սրտով կը կպչի նրանց, որոնք կը ծնուին մեր ամուսնութիւնից...: Այո՛... բայց դիցուք նա համաձայնի կապել իւր կեանքը իմի հետ, արդեօք փոքր չէ իմ յիսուն տարեկան հասակիս համեմատ...»:

Այս եսամոլ մտքերը որոճաց հէնց այն ժամանակ, երբ արդէն մօտեցել էր պաշտգամբին:

Տիկին Աշխարհեղեանը այդ ժամանակ պարտիզում ծաղիկներ էր քաղում:

— Տեսնում էք, տիկին, որ ես ի չարն եմ գործ դնում այն ազատութիւնը, որ ինձ պարգևել էք և ես առանց այլևայլութեան իբրև հարևան գալիս եմ մի քանի ժամ ձեզ հետ անցկացնելու:

Տիկինը նրան ընդունեց ժպտալով և մեկնեց իւր փոքրիկ թխացած ձեռքը, որը տեղ տեղ չանգուտած էր վարդի փշերով:

— Ես շատ ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ, պարոն, աւաց տիկինը ժպտալով. միայն թոյլ տուէք ինձ վերջացնեմ ծաղկաքաղս:

— Թոյլ կտամք, որ օգնեմ ձեզ...

— Իհարկէ: Վերցրէք լօտոցը և կտրեցէք այն ծաղիկը, որ ես ձեզ ցոյց կը տամ:

Դաւթեանը ուրախութեամբ դիմեց գործին: Ամեն անգամ նա հնազանդութեամբ կտրոււմ էր այն ծաղիկը, որ նրան տիկինը ցոյց էր տալիս: Եթէ մի մի անգամ նա կտրոււմ էր ցոյց չտուածը, տիկինը նրան խիստ նըկատողութիւն էր անում և կտրածը չէր ընդունում: Տ. Աշխարհեզեանը կանգնած մարգերի մէջ տեղում, հերարձակ, փայլուն աչքերով և կրծքին պինդ կպած ծաղիկների մի ահագին խուրձ, նորից մի նկատողութիւն արեց Դաւթեանցին իւր պայծառ և երգեցիկ ձայնով.

— Միայն, խնդրեմ, երկայն ծղերով կտրեցէք: Տուէք ինձ նարգիսը... Ոչ, այդ չէ. դա շաքօ է... Եւ այդ բոլորովին սպիտակ ծաղիկը դեղնագոյն սրտով... Միթէ ձեզ ծանօթ չէ բանաստեղծական նարգիսը, որ ինքը իւր պատկերից սիրահարուել էր: Դուք, պարոն անտառագէտ, երևի բոքիկ էք պարտիզային բուսաբերութիւնից:

Եւ նրանք ծիծաղում էին: Դաւթեանցը շատ էր հաւանում իւր այդ պաշտօնը, որ կատարում էր նա հրաշալի տիկնոջ հետ: Նա բոլորովին երիասարդացաւ տեսնելով գոյնզգոյն ծաղիկներ շարիշար կպած, իսկ վարդի, նարգիսի և զամբախի գարնանային հոտը նրան բոլորովին ապշեցրեց: Ամեն անգամ, երբ նա աւելացնում էր խուրձին որևէ բոյս, զգում էր մի առանձին զուարճութիւն հոտոտելով տիկնոջ մատները խոնաւ տերևների միջով:

— Հերիք է, ասաց տիկինը մի քառորդ ժամից յետոյ: Այժմ մնում է տեղաւորել անօթի մէջ:

Տիկինը տարաւ Դաւթեանցին հովանոցի տակ, ուր կային փայտեայ աթոռներ և մի սեղան, որի վրայ դրուած էին երկու հատ ջրով լի ճենապակեայ անօթ-

ներ: Այստեղ տիկինը այն ահագին խուրձից սկսեց փրնջեր շինել: Լևոն Դաւթեանցը տալիս էր մի մի բոյս տ. Աշխարհէգեանին և սա մեծ հմտութեամբ դարսում էր նրանց անօթի մէջ, պատշաճաւոր կերպիւ յարմարացնելով գոյները և փոփոխելով նրանց ըստ ձևի և մեծութեան: Փոքր առ փոքր մանուշակագոյն զամբախներ, ծածանուող քօշամօրուքներ, հոտաւէտ յափրուկներ և մկնականջի խուրձերը յաջորդում էին գեղանի նարգիսին ու սառսռոտ գետնի աստղին: Հովանոցի կամարի միջով երևում էր մի մեծ սզնի ծառ վարդագոյն ծաղիկներով, որոնց շուրջը միջատները արբեցած արևից ու ծաղկանց հոտից խուլ բզզոցով թռչկոտում էին:

Դաւթեանցը այս բոլորից մեղկացած և բոլորովին ապուշ կտրուած գոչեց մեղմութեամբ.

— Դղեակդ, տիկին, դրախտ է. սակայն մի այնպիսի դրախտ, ուր հանապազ միայնակ իւր անձի ընկերակցութեամբ ապրելը կարող է դառնալ ընդ միշտ միակերպ... Մտածել էք արդեօք երբ և իցէ կենդանացնել այդ միայնութիւնը:

Տիկին Աշխարհէգեանը իւր պարզ աչքերը յառեց խօսակցին: Նա վայր ձգեց վարդը, որից նա պոկում էր փշեր, լեռուեց արմուռնկներով սեղանին և մի քանի վայրկեան ընկղմած մնաց մաքերի մէջ:

Նրա շրթունքները մի մի անգամ բացւում էին, որ անէ իւր խոստովանութիւնը, բայց նրանք նորից իսկոյն փակւում էին: Տիրեց լռութիւն, որի միջոցին տիկինը նորից թրջում էր ջրի մէջ բոյսեր և գոյները յարմարացնում:

— Դուք կարծում էք, պարոն, որ միայնութիւնս կատարեալ է, այդպէս չէ... Աստուած իմ, ես էլ մի մի անգամ այդ մտքի եմ... Ինձ ու ինձ ես երբեմն հարց եմ տալիս, որ լաւ է կեանքս փոխեմ, բայց ես երկար

չեմ հրապուրուում այդ մտքերից... Սակայն...

Նա խսկոյն թեքեց գլուխը: Երկու անօթներն էլ լիքն էին: Նա վեր կացաւ, թափ տուեց իւր զգեստից կպած կանաչ տերևները և վերցնելով մի անօթ, իսկ միւսը յանձնելով Դաւթեանցին, ասաց, ծիծաղելով.

— Ես չարաչար փորձում եմ ձեր համբերութիւնը, բայց դուք այնքան բարի էք, որ հարկաւոր չէ ձեզ հետ զգոյշ լինել...

— Չշմարիտ էք ասում, տիկին, պատասխանեց նա վայելուչ կերպիւ, վարուեցիք ինձ հետ, իբրև բարեկամի... Ես միայն ափսոսում եմ, որ ծառայութիւնս այս փոքր բանով վերջացաւ... Ես կը կամենայի աւելի լըրջօրէն ցոյց տալ ձեզ իմ երախտագիտութիւնը, որ այդչափ հիւրասէր էք և այդքան մարդասէր դէպի ինձ: Եթէ երբեմն ձեր բնակարանը ձեզ ամալի է երևում, ապա ինչ պէտք է լինի գիւղը, աւր ինձ այժմ վիճակուել է ապրել:

Նրանք մտան հիւրասենեակը:

— Դէհ, ուրեմն, ասաց տ. Աշխարհէգետանը, դարսելով անօթները իրանց տեղում, եթէ իրաւ ձեր կեանքը այնտեղ դատարկ է, ինչո՞ւ ստէպ չէք յաճախում դղեակս:

— Թո՛ղ էք տալիս... շատ ուրախ եմ...

Նա իւր այցելութեան ժամը վերջացած համարելով, վերկացաւ հրաժեշտ տալու:

Նա նրան ձեռքը մեկնեց:

— Յոյս ունիմ շուտով կը տեսնուի՞նք, ասաց նա աշխուժութեամբ... վաղը, եթէ կամենում էք: Այո՛, եկէք հէնց վաղը: Ես գուցէ ձեզանից մի... խորհուրդ հարցնեմ:

Նա ուրախ տրամադրութեամբ հեռացաւ, նորից նրան տեսնելու յուսով և մանաւանդ ուրախ էր այն

խորհրդաւոր հաւատարմութեան համար, որ նա ունեցաւ դէպի իւր անձը:

Միւս օրը Դաւթեանցը հենց միևնոյն ժամին այնպէս յուզուած եկաւ, կարծես շտապում էր ժամադրութեան: Այդ օրը նա սովորականից աւելի էր հագացել իւր հագուստի մասին: Շտապելով դէպի որոշեալ տեղը, Դաւթեանցին թւում էր, որ այդ օրը և մարգագետնի կանաչը և ծառերի տերևները սովորականից շողշողուն են և թէ նրանք բուրում են հազուադիւտ անուշահոտութիւն: Յափշտակուած բնութեան երևոյթներով, նա արդէն տեսնում էր տ. Աշխարհեզեանին նստած նոյն հովանու տակ իւր քաղցր ու անուշիկ ժպիտով՝ իւր պայծառ աչքերը լառելով նրա վրայ: Նա սկսեց մի առ մի լիշել նրա խօսակցութիւնը և ուրախութեամբ կրկնում էր նոյնը:

Երբ տ. Աշխարհեզեանը նկատեց նրան, կարմրեց և առջ եկաւ:

— Բարև, պ. Դաւթեան, ասաց նա. դուք ճշտիւ կատարեցիք ձեր խոստմունքը: Շատ գոհ եմ, որ ձեզ տեսնում եմ:

Եւ մեկնեց նրան իւր ձեռքը:

— Ես մոռացկոտ չեմ, պատասխանեց նա մի փոքր ժամանակ պահելով իւր ձեռքի մէջ տիկնոջ մատները... բանն ինչո՞ւմն է, տիկին:

Տիկինը նորից կարմրեց, լետ քաշեց իւր ձեռքը, առաջարկեց նորան իւր թւը և ցոյց տալով պարտէզի կողմ, ասաց.

— Եկէք, այնտեղ խօսենք:

Տիկինը տարաւ նրան պարտէզի ամենայնտրնկած տեղը, ուր ծառախմբերից կազմուած մի բնական ծածկոց կար:

— Նստենք այստեղ, ասաց տիկինը, մօտենալով ծած-

կոցի մէջ տեղը շինած սեղանին, այստեղ մենք բոլորովին հանգիստ կարող ենք լինել:

Ծածկոցը, չորս կողմից շրջապատած ծառերն և անթափանցելիութիւնը այս վայրում խորհրդաւոր էին նրա համար: Դաւթեանը նստելով իւր հայեացքը ուղղեց տիկնոջ երեսին հարցական կերպիւ:

— Հարցնում էք թէ ինչի մասին պէտք է խօսեմ ձեզ հետ, այդպէս չէ, սկսեց տիկինը: Ահա թէ ինչի մասին... Սա մի փափուկ խնդիր է և դուք կը զարմանաք, թէ ինչ դիւրութեամբ ես համարձակուում եմ խոստովանել մի անձի, որին առաջին անգամ տեսել եմ հազիւ մի քանի օր առաջ. Սակայն դուք ինձ համար անծանօթ մարդ չէք. Ձեր ընկեր պ. Բարամեանցը բազմիցս խօսել է ձեր մասին և գովել ձեր ուղղամտութիւնն ու դատողութիւնը: Մտածեցէք և այն, որ ես այստեղ առանց մերձաւոր ազգականների միայնակ եմ մնացել: Ինձ շրջապատողները կամ գիւղացիք են կամ հասարակ պաշտօնեաներ: Հազիւ է մարդ պատահում այստեղ ձեզ պէս մէկի և ներեցէք եթէ ես թող եմ տալիս ինձ դիմել ձեր խորհրդին: Վերջապէս, շարունակեց նա յուզուած սրտով, կարծեմ ձեզ արդէն խոստովանել եմ, որ դուք ներշնչել էք իմ մէջ մեծ հաւատարմութիւն: Ես մի տեսակ մտերմութիւն եմ զգում դէպի ինձ համակրելի անձինք:

Այս խոստովանութիւնը, որ տիկինը շնչեց ծածկոցի խաղաղ ու անդորր վայրում, աւելի ևս գրգռեց Դաւթեանցի յօյր: Նա սեղմեց տիկնոջ ձեռքը և յայտնեց, որ բոլորովին զգացուած է այն հաւատարմութեամբ, որ ցոյց է տալիս նրան:

— Շնորհակալ եմ, աւելացրեց նա, որ վարւում էք ինձ հետ իբրև բարեկամի, չնայելով որ մի քանի օրուայ ծանօթներ ենք մենք. հաւատացէք, տիկին, իմ անձնուի-

ընթացանս: Ես դէպի ձեզ տածում եմ անհուն յարգանք
և միակ ցանկութիւնս է օգտակար լինել ձեզ:

—Ուրեմն, կը խնդրեմ ձեր ներողամտութիւնը:
Տիկիներ մի փոքր կանգ առաւ և ապա շարունակեց.

—Երեկուանից ես շատ եմ մտածել այն մի խօսքի
մասին, որ դուք յայտնեցիք միայնութեանս պատճա-
ռով... Ձեր դիտողութիւնը կապ ունէր այն խորհր-
դածութեանց հետ, որ մի տարուց ի վեր ինձ տանջում
է: Այո, թէև ես ինձ համար միշտ զբազմունք եմ զըտ-
նում մտածմունքներս ցրուելու համար, սակայն միայնու-
թիւնս ինձ շատ է նեղացնում. ես մտածում եմ որ
քսան և վեց տարեկան հասակում աշխարհից փախչելը
լիմարութիւն է: Ես ուժեղ եմ, բնաւորութեամբ ուրախ,
զգում եմ, որ ծնուած չեմ յաւիտեան ալրի մնալու և
ինձուհինձ հարց եմ տալիս՝ պէտք չէ՞ արդեօք վաղ թէ
ուշ կրկին ամուսնանալ:

—Ճշմարիտ էք ասում, հաստատեց Գալթեանը
ոգևորուած. միայնութիւնը ոչ ոքի համար ուրախալի
չէ, մանաւանդ աւելի վատ է երիտասարդ կնոջ, ձեզ նը-
ման մի շնորհալի տիկնոջ համար... Ել մի ուշացնէք
ու տատանուէք, որ վերջը ափսոսալու չդառնայ:

—Անշուշտ, պատասխանեց նա ժպտալով, որովհե-
տև ես արդէն մօտեցել եմ երեսուն տարեկան հասակին
և առաջին ամուսնութեամբ մի մեծ բազոտի չարժանա-
ցայ, ուրեմն պատճառ ունիմ զգոյշ լինելու: Հանգու-
ցեալ ամուսինս շատ ազնիւ մարդ էր, բայց ինձ հա-
ւասար չէր իւր կրթութեամբ և տարիքով. նա ինձ
վիճակուեց մեր ընտանիքի սնոտիապաշտութեան շնոր-
հիւ. մեր ծնողները կայացրել էին մեր կենակցութեան
վճիռը երբ մենք, գոնէ ես, աշխարհիս մասին գաղափար
չունէի: Ես նրա հետ ամուսնացայ նրան չճանաչելով և
այս պատճառով չեմ ուզում նորից նոյն սխալը գործել,

եթէ կրկին ամուսնանալու լինեմ: Ես կը կամենայի, որ այս անգամ իմ ընտրութիւնը ընկնի ինձ ցանկալի և ինձ հաւասար անձի վրայ... Ահա թէ ինչու նախ քան ցանկութիւնս իրագործելը, կուզէի իմանալ ձեզ պէս մի լրջմիտ մարդու կարծիքը... Գուք, պարոն, աշխարհք տեսած մարդ էք, դուք միայն կարող էք ինձ լաւ խորհուրդ տալ:

—Աւաղ, տիկին, հառաչեց Գաւթեանը, ես մի ամուրի մարդ եմ, հեռու աշխարհային վայելչութիւններէ և գործ ունիմ միայն իմ պաշտօնական թղթերիս հետ: Այնու ամենայնիւ ես ծանօթ եմ մարդկանց և կօզնեմ ձեր տատանմունքին... բայց նախ և առաջ, ասաց նա ժպտալով, ասացէք ինչ է ձեր իդէալը. արդեօք ընտրել էք արդէն...

—Այո՛, ասաց տիկինը և աչքերը խոնարհեցրեց: Միայն պէտք է ձեզ ասեմ, որ ես ատում եմ թեթեւաբարոյ անձանց, ես կուզէի որ իդէալս լինի կրթուած և աշխատասէր. կուզէի որ նա լինէր միանգամից զգայուն և ուժեղ, խոհական և արժանի հաւատարմութեան:

Գաւթեանը սքանչացաւ. գիտակցութիւնը նրան թեւադրում էր, որ ինքը կարող է բաւականութիւն տալ տիկնոջ իդէալին և ուրախութեան նշույլը փայլեց նրա երեսի վրայ:

—Շատ բարի, ասաց նա, այդ բոլորը վերաբերում է բարոյական կողմին, անցնենք այժմ ֆիզիքականի: Գուք, ենթադրում էք, որ ձեր իդէալական ամուսինը պէտք է որ շատ երիտասարդ լինի...

—Գիցուք այդ ենթադրութիւնը չլինէր, արդեօք ինչ վնաս կայ երիտասարդից: Իմ կարծիքով երիտասարդութիւնը ի ցոյց է հանում մարդու բարոյական յատկութիւնները և սրանց աւելի բեղմնաւոր են դարձ-

նում: Իմ կարծիքով համաձայնութիւն և սէր կարող է կայանալ երբ ամուսինների հասակների մէջ տարբերութիւնը շատ քիչ է:

— Այդպէս էք կարծում, փնթփնթաց նա:

Դաւթեանցի դէմքը խոժոռեցաւ. նրա աչքերի փայլը անհետացաւ:

— Դուք կարծում էք, որ ես շատ եմ պահանջում ասաց նա, նկատելով Լևոնի դէմքի փոփոխութիւնը:

— Իրաւունք ունիք այդպէս վարուելու, պատասխանեց նա տխուր:

— Լսեցէք, ես չեմ պահանջում փայլուն արտաքինը... Տիկինը բարձրացրեց աչքերը դէպի ծառերը, կարծես թէ այնտեղ էր ուզում տեսնել իւր երեւակայած ամուսնուն:

— Ես չեմ փնտռում, աւելացրեց նա փոքր ժամանակից լետու, աշխարհային ձիրքերով օժտուած մի մարդ, ես կուզէի միայն, որ նա երիտասարդ լինի, միայն թէ այդ երիտասարդութիւնը լինի լի յափշտակութեամբ և խանդաղատանքով: Նա պէտք է լինի գոռոզ. նա չպէտք է իւր դիրքը ձեռք բերած լինի ո՛չ իւր անունով և ո՛չ փողով, այլ միայն իւր արժանաւորութիւններով: Ես կը սիրեմ նրան նրա բնաւորութեան, ոյժի, խելքի, սրտի համար:

Տիկինը բացարձակ մերկացրեց իւր հոգին. Դաւթեանը շուտով հասկացաւ, որ նրա երեւակայած ամուսինը իւր արտաքին և ներքին բարեմասնութիւններով մի կենդանի պատկեր է, որ շատ նման է Արշակ Իւզբաշեանցին: Ի՛նչպէս եղաւ, որ նա հէնց առաջին օրից չկարողացաւ այդ գուշակել. շատ պարզ է, որ նրա ինքնասիրութիւնը այդ թույլ չէր տալ, քանի որ ինքը սիրահարի դեր էր ուզում կատարել: Որչափ նա կուրացաւ կարծելու, որ նա իւր հասակում կարող է գրաւել

երիտասարդ տիկնոջ ուշադրութիւնը: Տ. Աշխարբէգեանը իւր պարզմտութեամբ ու անկեղծութեամբ համեստութեան խիստ դաս տուաւ նրան:

Տիկինը նկատելով նրա թախծութիւնը և կարծելով թէ նրան վշտացրել է, գոչեց՝

— Ես հաւատացած եմ, որ դուք իմ մասին օտարոտի կարծիք կազմեցիք:

— Ոչ, տիկին, ձեր բոլոր ասածը սրտից էր բխած և դրանով դուք աւելի համակրելի էք:

— Ուրեմն ձեր կարծիքով եթէ ես պատահեմ նրկարագրած իդէալիս, կարող եմ նրան սիրել առանց լիմարութիւն անելու:

— Կատարելապէս:

— Նա արտասանեց վերջին խօսքը խորը հոգոց հանելով և վեր կացաւ:

— Գնալու ժամանակ է, խօսակցելով չնկատեցինք որ ժամանակը անցել է և արդէն ուշ է:

— Ճշմարիտ էք ասում. արևն արդէն թեքուելու վրայ է:

— Մնաք բարով, տիկին:

— Մնաք բարով էք ասում, միթէ շուտ էք գնալու:

— Ոչ... ես կերթամ Ծաղկաբնից, հէնց որ կառավարութեան վերջնական պատասխանը կստանամ... Յուսով եմ այս օրերս, գուցէ և վաղը, յայտնել այդ վճիռը գիւղացիներին. համարձակ կարող եմ ասել, որ ամեն ինչ ըստ ձեր ցանկութեան կը վերջանայ:

— Ուրեմն, էլ մի արտասանէք «մնաք բարով» անպիտան խօսքը, որովհետև մենք կրկին կտեսնուենք:

— Ինչ ասել կուզէ, որ առանց ձեզ տեսնելու և ձեր ձեռքը սեղմելու չեմ գնալ:

Նա այս բոլորը ասում էր վշտացած ձայնով: Տիկինը նկատեց նրա ձայնի փոփոխութիւնը, նրա դէմքի

թախծուծիւնը: Նա վախենում էր, որ ազամայ կարող էր նրան վիրաւորած լինել պարզապէս խօսելով ծերութեան մասին և իւր սխալը ուղղելու համար կրկնապատկեց իւր սիրալիր մեծարանքը:

— Եթէ կամիք, ասաց նա, մենք անցնենք պարտիզի միջով. պարտիզի ծայրին կայ մի դուռը, որ դէպի դաշտն է բացուում. այնտեղից ճանապարհը շատ կը կարճանայ... Տուէք ինձ ձեր թւեր:

Նա հնազանդուեց և թւանցուկ ուղղեցին քալելը դէպի պարտէզ: Չանապարհին տիկինը քաղցրսլիկ խօսքերով կամենում էր մոռանալ տալ նրան այն վիշտը, որ կարող էր պատճառած լինել: Նրանք անցնում էին ծառախմբի շուքի տակ, մինչդեռ ծառերի գագաթները լուսաւորուած վերջալոյսով ծիրանի գոյնով էին ներկուել: Դաւթեանցը զգալով իւր թւի մէջ տիկնոջ փափուկ թւեր, լսելով նրա քաղցրալից ու նազելի խօսքերը, որով աշխատում էր ամօքել նրա վիշտը, աւելի ևս վշտացաւ: Նա մտմտում էր՝ «ես այլ ևս յոյս չունիմ սրանից. սա ինձ փաղաքշում է իբրև մի ծեր մարդու...»:

Նրանք մօտեցան փոքրիկ դրան, որ տիկինը մեծ դժուարութեամբ բացեց: Առաջինը նա կոխեց դրան շէմքը և մեկնելով նրան իւր ձեռքը՝ ասաց.

— Այժմ կարող էք գնալ դէպի աջ... Ցտեսութիւն. այնպէս չէ... խնդրեմ ներէք ինձ, որ ի չարը գործ դրի ձեր համբերութիւնը:

Նա սեղմեց տիկնոջ ձեռքը, իբրև պատասխան հարցին: Այնուհետև նրանք բաժանուեցան:

Դաւթեանցը խորը խոցուած սրտով գնում էր ծառերի միջով, երբ յանկարծ նրա ուշադրութիւնը գրաւեց տերևների խշխշոցը: Այդ միջոցին նա նկատեց մի երիտասարդ տղայ, որ շտապով հեռանում էր արտի

միջով, աշխատելով ցոյց չտալ իւր երեսը: Դաւթեանը մի փոքր կանգ առաւ և ապշած բացականչեց.

— Հրաշք է, իրաւ, փախչողը սրբան նմանութիւն ունի Արշակ Իւզբաշեանցի հետ:

Է.

Զբաղուած այդ գէպքով Դաւթեանն առաջ էր գընում մի ճանապարհով, որ պարտիզից բաժանուած էր ցանկապատով և խրամով, որի մէջ խոխոջալով վազում էր մի առուակ և թափւում գետակի մէջ: Միւս կողմից տարածւում էին շինական արտերը: Առուակի խոխոջումն և միջատների երեկոյեան երգը աւելացնում էին միայնութեան այն ներգործութիւնը, որ այս ըուպէիս ճմլում էր Դաւթեանցի սիրտը: Այն ըուպէից, երբ տ. Աշխարբէգեանցը իւր անկեղծ խոստովանութեամբ խորտակեց նրա յոյսերը, նա սաստիկ հիասթափուեց: Այն անհանգստութիւնը, որ գգում էր նա չքնաղ տիկնոջ դղեակը այցելելուց առաջ, նորից տիրեց նրա հոգուն, այդ անհանգստութիւնը աւելի ևս սաստկացաւ, երբ խորտակուեցան նրա ցնորքները և տ. Աշխարբէգեանը նրանց ի դերև հանեց:

Մի գով քամի թեթև կերպիւ օրօրում էր արտը և խոնարհում ծառի գագաթները, կարծես անտառը իւր վերջին յուսահատ հառաչանքը ուղարկում էր վերջալոյսին: Երեկոյեան անհուն տխրութիւնը այս ամալի վայրում թափանցում էր վերատեսչի ուղեղը: Նրա շըրթունքները դառնապէս շշնչացին՝ «Արդէն սու է, այն, շատ սու է... Այլ ևս անկարելի է կեանք սկսել...»

Դանդաղ առաջ քայլելով, նա դուրս եկաւ անտառից: Հեռուից արդէն պարզ նկատելի էին գիւղի տների կտուրները շրջապատուած կապուտ ծխով: Գիւղում

տիրում էր լուսթիւն: Ժամանակ առ ժամանակ ուշացած գիւղացիք քրտնաթոր աշխատութիւնից լետոյ շտապում էին իրանց բնակարանները և նրանց ծանրացած քալիները խուլ արձագանք էին տալիս: Գետի ափին սալաքարի վրայ կանգնած մի գեղջկուհի շտապում էր ողորել լուացքը և գցել թաբախի մէջ: Դաւթեանի քայլերից արթնացած լուացարարը շուռ եկաւ և հետաքրքիր աչքերով սկսեց դիտել Դաւթեանցին: Սա մտազբաղ շարունակեց իւր ճանապարհը. լուացարարը սուր ձայնով վստահացաւ ասել.

— Բարիգուն աղա:

Դաւթեանը կանգ առաւ և յռեց իւր աչքերը կնոջ վրայ: Սա մի նիհար կին էր մօտ լիսուն տարեկան: Գլխի փաթըթանքը աշխատելուց մի փոքր ծուռել էր և տակից դուրս էին թափուել ալևոր մազերը:

— Աղա, նորից վստահացաւ կինը, դուք ինձ չէք ճանաչում... Այն ժամանակ, երբ դուք էլի այստեղ էիք բնակւում իւզբաշի Գասպարի տանը, քանիցս ձեր լուացքը լուացել եմ... Ես Ծառունց Ռէհանն եմ... լիշում էք:

Այժմ միայն Դաւթեանը լիշեց այդ կնոջ. իրաւ սրան տեսել էր իւր տանտիրոջ տանը լուացք, կար ու կարկատան անելիս և այն ժամանակ իբրև մի որբ աղջկան բարի տանտէրերը ապաստանարան էին տուել նորան իրանց մօտ:

— Այժմ լիշում եմ... ինչպէս ես Ռէհան:

— Ինչպէս տեսնում ես, աղա, աշխատում եմ:

— Կար ու կարկատանք, լուացք...

— Չէ որ հարկաւոր է մի թիքայ հաց ճարել. ինչ անեմ, այս է վիճակս. ծնկներումս էլ ոյժ չկայ... բայց պէտք է աշխատել, քաղցած հօ չեմ մեռնիլ... գիւղումս չկայ էլ բարեհոգի մարդ, որ իմ հոգսը քաշէր...

Դաւթեանը Ռէհանի ձեռքի ափին թղթադրամ

դնելով և մի քանի մխիթարական խօսքեր ասելուց լետոյ շուռ եկաւ շարունակելու իւր ճանապարհը: Հագիւ մի քանի քայլ առաւ, նա նորից լսեց Ռեհանի ձայնը.

— Աղա՛, տեսելես սանիկիդ, ի՞նչ լաւ տղայ դուրս եկաւ:

Գաւթեանցը լետ եկաւ..

— Ի՞նչ ասիր, Ռեհան, հարցրեց նա:

— Սանիկդ տեսա՛ր, մեր Արշակին, մեռնեմ նրա ազիզ հոգուն:

— Սանիկիս... Ո՛րն է իմ սանիկը..

— Արշակը.. իւզբաշի Գասպարի տղան, մխիթէ նրան չես տեսել..

— Արշակին... մխիթէ նա իմ սանիկն է.. սխալուում ես, Ռեհան... սանիկս իւր ծնողների հետ չէ՞ որ խոլերայի զոհ եղաւ..

— Աչն ու խաչը նրան... Բնչ յես ասում, տղա, սանիկդ չէր, նրա պատի եղբայրը, Օհանէսը մեռաւ: Սանիկդ կենդանի է, մեռնեմ նրա արևին:

Գաւթեանցը սարսափեց.. Արշակ Իւզբաշեանցը երևում է որ նրա սանիկն է: Ոչ, պառաւ Ռեհանը սրխալում է. լիշողութիւնը նրան մատնում է: Անկարելի բան է.. նա հաւատացած է, որ նա էլ է զոհ գնացել համաճարակ ախտին... Մինչդեռ այս մտքերով պաշարուած էր Գաւթեանը, Ռեհանը շարունակում էր..

— Աղա, լիշո՛ւմ ես թէ որքան բարկանում էիր որ նրա անունը Մինաս չդնեն, ալլ ուրիշ անուն, բայց մեր հանգուցեալ քահանան այնպէս էլ արաւ... վերջը ողորմած հոգի իւզբաշին մի փարաջացու խոստացաւ տէրին, ապա թէ փոխել տուաւ..

— Միտս է, որ չէի ուզում այդ անունը, բայց փոխելը չեմ լիշում:

— Այդ եղաւ քո գնալուց լետոյ. տէրին փարաջա-

ցու խոստացաւ և դաւթրումը անունը փոխել տուաւ:

— Այդ ես չեմ իմանում, ասաց Դաւթեանը և աւելացրեց. — Ռէհան, զո՞րդ ես ասում...

— Ադա, ասածս բոլորովին ճշմարիտ է... Ախր ասում էր լուսահոգին, այդ քաւորիս ցանկութիւնն է, պէտք է նրա խօսքով լինի... շատ մտածեցին թէ ինչ անուն գրել տան, շատ դէս արին, դէն արին, վերջը Արշակ անունը գրել տուին... երդուում եմ որ այդ այդպէս է, այդ ամենը իմ աչքի առաջ կատարուեց...

Ռէհանը շարունակ խօսում էր. իւր ասածի ճշմարտութեան համար զանազան փաստեր էր բերում, սակայն Դաւթեանցը նրան էլ չէր լսում. նա ընկղմած մտածմունքների մէջ անշարժ կանգնած էր. վերջը նա անգիտակցաբար շուռ եկաւ և շարունակեց իւր ճանապարհը:

Ռէհանի խօսքերը ներգործեցին Դաւթեանցի սրտի ամենանուրբ լարերի վրայ: Բաւական չէր այն հարուածը, որ կրեց նրա ինքնասիրութիւնը, երբ նա լի լուսով ու հաւատով առաջին անգամ կոխեց տ. Աշխարհէգեանի տան շէմքը... այժմ նա զգում է և մի նոր հարուած: Տիկին Աշխարհէգեանի ընտրած տղան նրա սանիկն է, այն առողջակազմ, զուարթամիտ Արշակը, որին նա հայկական սովորութեամբ հայրութիւն է արել քսան և վեց տարի առաջ: Այդ իւր սանիկը հաճելի դարձաւ չքնաղ տ. Աշխարհէգեանին հէնց այն ժամանակ, երբ իւր միայնութիւնը կեանքի մէջ զգուելի դարձաւ և լիսուն տարեկան հասակում որոշեց վերջ դնել այդ անտանելի կեանքին և ամուսնանալ: Ինչ ասել կուզի, որ տիկինը պէտք է գերադասէր Արշակին, որ երիտասարդութեան հետ ներկայացնում է կորովի ոյժ, մեծ հոգի, կրակոտ սիրտ և անշիջանելի եռանդ: Այո՛, տիկինը կատարեալ իրա-

ւունք ունի նրան հաւանելու, նրան, իւր սանիկին... քայց ի՛րաւ է այդ. չէ սխալուում արդեօք Ռէհանը: Գիւղացի կանայք հաշուի ու տարեգրութեան մասին առ հասարակ մութ գաղափար ունին: Շատ անգամ պատահում է որ մէկի հետ պատահած դէպքը վերագրում են ուրիշին. նոյնը կարող էր պատահել Արշակի վերաբերութեամբ: Նշմարիտ է, ես վիճել եմ քահանայի հետ նրան անուն տալու առթիւ. ես նրան համոզում էի տալ սանիկիս որևէ հայկական անուն, քայց քահանան յամառութեամբ իրանն էր պնդում... այդ նորաձևութեանը շատ հակառակեց... վերջը փոխել են տուել... քայց մի՞թէ կարելի է փոխել տալ...

Իսկութեանցը բոլորովին ձանձրացել էր այդչափ շատ մտածելուց ու կասկածելուց: Նա ուզեց հաստատապէս ստուգել այդ հանգամանքը և գիւղը եկած չեկած իսկոյն բաղխեց քահանայի տան դուռը: Թէև գիտէր, որ այդ քահանան նոր էր նշանակուած այդ գիւղում, սակայն յոյս ունէր իւր մի քանի կասկածանքները փարատելու համար ստանալ նրանից բաւարար բացատրութիւն:

Քահանան ինքը բաց արաւ տան դուռը և սիրալիբ ընդունելութեամբ հրաւիրեց ներս: Սա առողջակազմ, բարձրահասակ երիտասարդ մարդ էր, կարճ մօրուքով և մազերով: Սա նոր էր ձեռնադրուել մի քանի տարի տիրացուի պաշտօնով ծառայելով քաղաքում: Առ հասարակ իբրև նորընծայ քահանայ մեծ մեծ նախագծեր էր կազմել իւր մտքում գիւղի ծխականների մտաւոր յառաջադիմութեան համար: Նա մտադիր էր հիմնել տալ գիւղացիներին ոչ թէ միայն դպրոցներ թէ աղջկանց և թէ տղայոց համար, այլ և անկելանոց ծերերի համար: Միով բանիւ սա կամենում էր իրագործել մէկ յետ ընկած աղքատ գիւղի մէջ այնպիսի բաներ, որոնք դժուար իրագործելի են դառնում մեծ

քաղաքների համար: Անկեղծ սրտից էին բղխում այդ մտածած ծրագիրները, թէ նորեկ մարդու աչքին թող փչելու ցանկութիւն էր, այդ Աստուած գիտէ: Դաւթեանցին միայն շատ ձանձրացրեց նրա շատախօսութիւնը, որ այն աստիճանի հասաւ, որ մէկ ուզեց կարճ կտրել և հեռանալ այն տեղից, բայց մէկ էլ հնազանդութեամբ լսում էր նրան, յուսալով թէ կը գտնէ մի միջոց, երբ իւր մտատանջութեան բացատրութիւնը կը ստանայ նրանից: Վերջապէս հասաւ այդ միջոցը: Քահանան՝ թուելով իւր նախագծերը մեծ յօյս էր տածում Արշակի օժանդակութեան վրայ, Արշակի, որ միակ մարդն է գիւղում իբրև հասկացող, խոհեմ ու գիւղին սրտով նուիրուած մարդ...

— Տէր հայր, ընդմիջեց Դաւթեանցը սմենապերձախօս տեղում, Արշակը իւզբաշի Գասպարի տղէն է, չէ...

— Ես իւզբաշի Գասպարին չվրայ հասայ, բայց ասում են գիւղացիք, որ հազուագիւտ մարդ էր... և շարունակեց քահանան դրուատել հանգուցեալ իւզբաշու բարեմասնութիւնները և նրա հետ նորից իւր նախագծերի իրագործման կարելիութեան մասին նորանոր դատողութիւններ անել:

Դաւթեանցը նստած տեղում շուռ ու մուռ էր գալիս, իբրև վանդակի մէջ փակուած թռչուն, որին վանդակի չորս պատերը սաստիկ շփոթ ու երկիւղ են պատճառում:

— Ես ձեզ հաւատացնում եմ, պարոն վերատեսուչ, շարունակում էր քահանան, որ եթէ դուք այնքան բարի լինիք և կատարէք գիւղացիների պահանջը, անտառաբաժնի մասին, այն ժամանակ ամեն բան կատարեալ կը լինի և ես էլ կիրագործեմ իմ ցանկութիւններս գիւղի բարօրութեան և երջանկութեան համար...

Խօսակցութեան այս անսպասելի փոփոխութիւնը

իւր յանձնարարութեան վերաբերութեամբ նորից յոյս ներշնչեց Դաւթեանցին: Այս անգամ նա հաւատացած էր, որ խօսելու հերթը քահանան նրան կը տայ և նա հէնց ուզեց խօսել իւր մտադրութեանց մասին, տէր հայրը վեր թռաւ տեղից և հեռացաւ միւս սենեակը: Դաւթեանցը օգուտ քաղելով այս հանգամանքից, վեր կացաւ տեղից և սպասեց քահանայի վերադառնալուն, որ նրան հրաժեշտ տայ: Քահանան նրա միտքը հասկանալով զարմացաւ, որ այդքան շուտ թողնում է իրան, մինչդեռ նա միտք ունէր ծանօթացնել նրան իւր ծըրազիրներէ հետ, որ արդէն գրած ունէր:

— Շատ ցանկալի է, տէր հայր, որ ձեր բոլոր ծրագիրները իրականութիւն ստանան և հաւատում եմ, որ դուք ձեր եռանդով և Արշակ Իւզբաշեանցի օժանդակութեամբ անպատճառ կիրաւործէք... սակայն, տէր հայր, ես ձեզ մօտ մի խնդիր ունիմ, որ յոյս ունիմ կը կատարէք...

Դաւթեանցը նորից նստեց և սկսեց նրան յայտնել իւր խնդիրը...

— Անկարելի է, յանկարծ գոչեց քահանան, այդպիսի մի բան օրինաւոր հաստատութեան մէջ չի կարող պատահել... հարկաւոր է պատժել քահանային...

— Նրան պատժելը արդէն ուշ է. այդ անող քահանան մեռած է, ասաց հանդարտութեամբ Դաւթեանցը. . .

— Ինչ էլ են գիմում այդպիսի խնդիրքով զինուորագրութեան ժամանակ, որ կենդանու փոխարէն մեռածի տարիքի վկայական տամ, բայց այդպիսի մի բան ես կանեմ... Ոչ, ոչ, այդ անկարելի բան է, տաքացած խօսում էր քահանան:

— Այստեղ զինուորագրութեան մասին խօսք չի կարող լինել... ես միայն հարցնում եմ ձեզանից, ստու-

գեղէք այդ բանը, իրաւ կարող է պատահել, որ մկրտուութեան օրը քահանան տալ մի անուն և լետոյ ուրիշի փոխէ...

—Այդ դատապարտելի բան է..

—Ես շատ լաւ հասկանում եմ .. Ահա, տէր հայր, ձեզ աջհամբոյր, ասաց Դաւթեանը, ճխտելով տէր հօր ձեռքի մէջ թղթադրամ...

—Բայց ինչպէս իմանամ, ասաց քահանան և աջ ձեռքը տարաւ իւր սքեմի լայն գրպանը...

—Չափաբերական մատեանները հօգևոր կառավարութեան ատեանումն են, ինքն իրան խօսում էր քահանան և լետոյ դառնալով Դաւթեանցին հարցրեց. — Ո՞ւմ ծննդեան և մկրտութեան օրն էք ուզում իմանալ:

Դաւթեանցը մինչև այժմ այդ հարցը քահանային չէր բացատրել. նա միայն ընդհանուր հարց էր տուել այդ տեսակ հանգամանքի մասին: Այժմ պարտաւոր էր տալ նրան այդ բացատրութիւնը. քահանայի շատախօսութիւնը նրան յոյս չէր տալիս, որ իւր հետախուզութիւնը կարողանար գաղտնիք մնալ:

—Տէր հայր, ասաց նա ժպտալով, ես ձեզ գիմում եմ իբրև խոստովանահօր. կուզէի որ գաղտնիք մնար իմ հետաքրքրութիւնը...

—Ոհ, ոհ, ինչ ասել կուզէ..

—Եթէ այդպէս է, տէրհայր, կատարեցէք խնդիրս: Դաւթեանցը վեր կացաւ տեղից և մօտենալով տէր հօրը նորից մի բան գրեց նրա ափի մէջ.. — Ես ուզում եմ իմանալ Արշակ Իւզբաշեանցի ծննդեան և մկրտութեան տարին...

Քահանան զարմացմամբ լառեց իւր խոշոր աչքերը Դաւթեանցի վրայ և այնչափ ինքն իրան մոռացաւ, որ ափի մէջ ճխտած թղթադրամը գրեց իւր կողքի սեղանի վրայ և վեր կացաւ...

— Ուրեմն ձեր խնդիրը Արշակի մասին է...

— Այո՛, տէր Հայր, ինձ այդ շատ հետաքրքիր է...

Քահանան խոնարհեց աչքերը և նկատելով որ թղթադրամը թողել էր սեղանի վրայ, շտապով վերցրեց և դրեց գրպանը...

— Ես կարող եմ ձեր խնդիրը կատարել. մենք ունինք այսպէս ասած մի քօթուկ մատեան, դա մի ժողովածու է, ուր ըստ տարեգրութեան գրուած են այդ տեղեկութիւնները:

Այս ասելով նա մտաւ միւս սենեակը և տասը ընդամենը յետոյ դուրս բերեց մի մեծ հնացած մատեան գլխած կազմով:

— Ո՛ր երորդ տարին էր, եթէ գիտէք, հարցրեց քահանան դնելով մատեանը սեղանի վրայ և թերթելով ժամանակից դեղնացած թերթերը:

— Բաց արէք, տէր Հայր, 185* թուականը, ասաց Գաւթեանը և մօտեցաւ քահանային:

Քահանան բացանելով տարին, սկսեց թերթել, միշտ իւր մատը ասնելով ստորին շրթունքին և թաց անելով: Գաւթեանը ուշի ուշով հետևում էր նրա գործողութեանը: Վերջապէս գտնուեցաւ ցանկացածը: Մտեանում գրուած էր հետևեալը. յամին 185* ի 24 հոկտեմբերի, ես Ծաղկաբնի գիւղական քահանայս, Տէր Բաղդասար Տէր Պետրոսեանցս մկրտեցի արու զաւակ գիւղիս Գասպար իւզբաշու յորջորջեալն Գասպար իւզբաշեանց, ծնեալն յօրինաւոր ամուսնութենէ ընդ Շամամի ի նոյն ամին ի 10 հոկտեմբերի, յաւազանէ սրբոյ մկրտութեան տուեալ է նմա անուն Մինաս՝ կնքահայրութեամբ տեղիս մէշաբէգի Լևոնի Գաւթեանց...» Վերջը նոյն քահանայի ձեռքով աւելացրած էր «խնդրանօք ծնողաց Մինաս անունն փոխեալ է յԱրշակ, որով և մուծեալ է ի չափաբերական մատենի»:

Դաւթեանցը ալլալուեց. կասկած չկար, որ Արշակը նրա սանիկն է... Նա էլ երկար չմնաց քահանայի մօտ. շտապով շնորհակալութիւն արեց ու գնաց իւր բնակարանը:

Ը.

Հետեւեալ օրը շինական կառավարութեան մէջ գաւառապետի մասնակցութեամբ նշանակուած էր ժողով, որին ներկայ պէտք է լինէին մի քանի կալուածատէրեր, շրջակայ գիւղական հասարակութիւնների ներկայացուցիչներ և Արշակ Իւզբաշեանցը իբրև հաւատարմատար տ. Աշխարհէգեանցի: Մինական կառավարութեան առաջ հրապարակի վրայ հաւաքուել էին գործին մասնակցողները և խմբերի բաժանուած խօսում էին իրար մէջ: Այդ միջոցին եկաւ և Դաւթեանցը: Սրա դէմքը սփռութեամբ էր, աչքերը խորացել էին, երևում էր որ նա ամբողջ գիշերը անքուն էր անցկացրել: Առաւօտը զարթնելով և խելքը գլուխը ժողովելով աւելի ևս վըշտացաւ, երբ իւր անտանելի կացութիւնը նորից մտաբերեց: Նրան տանջում էր միայն այն միտքը, թէ ինչու բաղդը իրան հալածում է. հազիւ կարողացաւ մըտածել ամուսնութեան մասին և ահա մի պատահական դէպք արգելք է դնում, ոչ ապաքէն ճատակագիրը ծաղրում է նրան: Պէտք էր այս ամալի տեղում լոյս ընկնէր մի անձն, որին ինքը մկրտութեան աւագանից գրկել է, կնքահայրութիւն է արել, որ իսպառ կործանէր նրա ամուսնական ցնորքները: Քանի շատ էր մտածում այս մասին, այնքան աւելի ու աւելի ներկայանում էր նրա առաջ Արշակի առողջակազմ մարմինը, խելացի աչքերը, նրա ուժեղ ու թափանցող հայեացքը. մտքով մտերմանում էր նրա հետ, համարելով նրան այժմ իրան սրտակից:

Նա դանդաղ քալելով մօտենում էր շինական կա-

Բաւական չէր Արշակի ներկայութիւնը, որ սաստիկ շուգում էր նրան և մի ուրիշ ձախորդութիւն խլեց նրանից արիութեան մի մասը: Նա կարծում էր թէ շուտով կստանայ վարչութիւնից իւր առաջարկութեան պատասխանը, որպէս զի հարցը արդէն որոշուած դրութեամբ հաղորդէր ժողովականներին: Սակայն վարչութեան լուութիւնը նրան պարտաւորեցնում էր լսել ներկայացուցիչների բողոքը, և նա անկարող եղաւ ծանօթացնել նրանց իւր առաջարկութեան հետ: Միայն կարողացաւ հաւատացնել, որ գործի վճիռը լետաձգուած է մինչև նոր կարգադրութիւն և թէ այդ որոշումը անշուշտ բաւարարութիւն կը տայ թէ գիւղական հասարակութեանց և թէ մասնաւոր կալուածատէրերին:

Նրա ճառը սառը ընդունելութիւն գտաւ. բայց հէնց որ Արշակ Իւզբաշեանցը տեղից վեր կացաւ՝ ամենքի աչքերը նրա կողմ ուղղուեցան:

Արշակը խօսում էր հաստատ ձայնով:

— Մեր պատասխանը, ասացնա, կարճ է: Մեզ խոստանում են մասնատրել մի նոր անտառաբաժին: Մեր պարտքն է լիշեցնել վարչութեան, որ այն անտառաբաժինը, որը այսրոպէիս մեզ առաջարկում են, թէ անյարմար է և թէ անպէտք մեր ամենքիս պահանջներին լրացուցիչ բաւարարութիւն տալու: Ես կը խնդրեմ վարչութեան ներկայացուցիչն պարզ ասել կամակից է արդեօք նա այն անարդար գործողութեանց, որ կատարել է մեր վերաբերութեամբ տեղիս անտառապետը:

Մինչդեռ Արշակը խօսում էր, Իւլութեանցը չէր հեռացնում իւր աչքերը նրանից. այլ ապշած դիտում էր նրա բոլոր շարժումները, լսում նրա խօսակցութեան եղանակը, որ քաղցր հնչում էր իւր ականջին: Նա բոլորովին յափշտակուած էր նրանով և սթափուեցաւ միայն այն ժամանակ, երբ լսուեց գիւղացիների միջից շուկ,

հաւանութեան նշաններ երկտասարդի խօսած ճառին:

— Ժողովականներ, ասաց Գաւթեանցը մեզմ ձայնով, ինձ հասկանալի է ձեր անհամբերութիւնը. բայց վարչութեան որոշումը ձեր ցանկութեան համեմատ արագ չէ լինում: Կարծիքս արդէն յայտնել եմ ուր հարկն էր. ինձ մնում է միայն լռել մինչև որ ստանամ մի որոշ պատասխան: Այդ բանը շուտով կը լինի և հէնց որ ստանամ, կշտապեմ ձեզ հաղորդել:

— Մենք հէնց միայն այդ ենք լսում, պատասխանեց Արշակը, ահա երկու տարուց ի վեր մեզ քնացնում են խոստմունքներով: Համբերութիւնը ձեզ համար գին չունի, պարոն վերատեսուչ, իսկ մեզ համար, որ այսքան նեղանում ենք վարչութեան դանդաղիտութիւնից, շատ ծանր է: Մեր իրաւունքները, մեր շահերը վնասուած են և մեր աղբիւրները պակասում են: Մենք այլ ևս սպասել չենք կարող:

Գաւառապետը նկատողութիւն արեց Արշակին վարչութեան ներկայացուցչի ներկայութեամբ այդպիսի լեզու բանեցնելու համար: Իրաւ, Արշակի գրգռուած դրութիւնն ու կծու խօսքերը վատ տպաւորութիւն գործեցին Գաւթեանցի վրայ. մանաւանդ, որ բոլոր յանցանքը ըստ երևոյթին փաթաթում էր նրա վրայ, այն ինչ ինքը ոչինչ մեղք չունէր: Չկարողանալով իրան արգարացնել, խիստ էր ցաւում, որ այդ յանդիմանական և թշնամական ոճը ուղղել է նրա դէմ մի տղայ, որ իւր սանիկն է և որին հայրական գորովով կը սեղմէր իւր կուրծքին:

Գաւառապետի նկատողութիւնից վիրաւորուած Արշակը դիմեց ժողովականներին.

— Դուք միևնոյն կարծիքի չէք, պարոններ, ինչ էք լռել. հասել է խօսքից գործի անցնելու ժամանակը. դուք չէ՞ք, որ գանգատուում էիք բողոքել երկրիս գըլ-

խաւոր կառավարութեան, եթէ անտառալին վարչութիւնից բաւարարութիւն չէք ստանալ, ով որ իմ կարծիքի է, թող ձեռքը բարձրացնէ:

Գիւղացիք անհաստատութեամբ մի քանի վայրկեան միմեանց նայեցին և իսկոյն կայծակի արագութեամբ բարձրացրին իրանց ձեռքերը:

— Այդպէս, գոչեց Արշակը հանդիսաւոր կերպով և դառնալով Դաւթեանցին դժգոհութեամբ աւելացրեց. պարոն վերատեսուչ, էլ մեզ ոչինչ չէ մնում ասելու...

Այս ասելով նա տեղից վեր կացաւ և դիմեց դէպի դուռը. նրան հետևեցին մի քանի համարձակ գիւղացիներ: Գաւառապետը խիստ գրգռուած Արշակի վարմունքից՝ փակեց նիստը, ներողութիւն խնդրելով Դաւթեանցից Արշակի համարձակութեան համար և խոստացաւ նրան այդ բանը զգացնել տալ: Դաւթեանցը ժպտաց և խնդրեց գաւառապետին ուշադրութիւն չդարձնել այդ հանգամանքի վրայ, քանի որ ինքը զգում է դրանց արդար զայրոյթի պատճառը:

Գաւառապետը և Դաւթեանցը այսպէս խօսակցելով գուրս եկան ատեանից: Դրան շէմքից Դաւթեանցը նրկատեց Արշակ Իւզբաշեանցին, որ հրաժեշտ տալով իւր ընկերակիցներին, դանդաղ քայլերով անցնում էր հրապարակը: Նա շտապեց իջնել սանդուխտներից և հասնելով Արշակին, ասաց նրան ետևից՝

— Պ. Արշակ, մի փոքր կանգ առէք, խօսելու բան ունիմ:

Արշակը շուռ եկաւ և նրա աչքերի մէջ փայլեց բարկութիւն. բայց ինքն իրան զսպելով լուռ հեռացաւ մի աւելի ապահով տեղ:

— Ինչ էք ուզում ինձ ասել, հարցրեց նա կանգնելով Դաւթեանցի առաջ ձեռքերը խաչած:

— Պարոն, ինձ թւում է, որ դուք այս ընդհան

կրքով էք վարւում, քան թէ խոհեմաբար: Հաւատացէք ինձ, սպասեցէք մէկ երկու օր էլ և դեռ վերջնական որոշում մի անէք: Ես այժմ խօսում եմ ձեզ հետ ոչ իբրև հակառակօրդի, այլ բարեկամի հետ:

— Դուք բարեկամս չէք, կոպտութեամբ գոչեց երիտասարդը:

— Այնու ամենայնիւ ես կուզէի լինել, բայց զարմացած եմ ձեր թշնամութիւնից: Ես ձեզ ոչ մի առիթ չեմ տուել ինձ հետ այդպէս վարուելու գոնէ այն օրից, երբ մենք միասին վերադառնում էինք տ. Աշխարբէգեանցի գղեակից...

Տ. Աշխարբէգեանցի գղեակի լիշողութիւնը փոխանակ հանդարտացնելու աւելի գրգռեց Արշակ Իւզբաշեանցին:

— Ես ատում եմ նենգամտութիւնը, գոչեց նա. դուք ինձ խոստացաք օրէնքի զօրութեամբ վարուել վիճելի խնդրի հետ, այն ինչ դուք խաբեցիք...

— Այդպէս թեթև սրտով ինձ մի մեղադրէք, պատասխանեց Դաւթեանցը քաղցրութեամբ, որ սակայն չըշարժեց իւր խօսակցի սիրտը: Կրկնում եմ, որ թուղթը գրել եմ և դուք իրաւունք չունիք ինձ մեղադրել, քանի որ չէք իմանում թէ ինչ մտքով եմ գրել. Ի՞նչու ինձ հաւատ չէք ընծայում և չէք սպասում մի քանի օր:

— Ի՞նչու, ձայնեց Արշակը և այս անգամ չկարողացաւ իւր երիտասարդական զայրոյթը զսպել: Որովհետև ես ձեզ հասկացայ, որովհետև ես գիտեմ թէ ինչ է նշանակում օր օրի վրայ յետաձգել: Ձեզ այդ ձեռնտու է, որպէս զի միջոց ունենաք ստէպ ստէպ յաճախել տ. Աշխարբէգեանցի գղեակը:

Դաւթեանցը նայեց նրան ապշած և նորից խորին կերպով խոցեց նրա սիրտը այն քինախնդրութիւնը, որ փայլում էր Արշակի աչքերի մէջ:

—Ձարմանում եմ, ասաց նա պարսաւանքով, թէ ինչու տ. Աշխարհէգեանցին խառնում էք մեր վէճի մէջ:

—Ա՛խ, շշնչաց հեգնօրէն Արշակը, այդ ձեզ զարմացնում է... եթէ դուք այնքան հնարագէտ էք, որ կարողանում էք քօղարկել եղելութիւնը, լաւ իմացէք, որ կայ մէկը, որ գիտէ պարզել ձեր խաղը:

Դաւթեանցը ուսերը վեր քաշեց:

—Խաղս խորհրդաւոր չէ և ես չեմ թագցնում իմ այցելութիւններս տ. Աշխարհէգեանին:

—Գոնէ թագցնում էք ձեր այնտեղից դուրս գալը:

—Ե՛ս, բողոքեց նա:

—Այո՛, դուք... Հենց երէկ երեկոյեան դուք գաղտնի դռնով այնտեղից փախուստ տուիք... Եթէ համարձակութիւն ունիք, ուրացէք..

—Ախ, ես հասկանում եմ:

Այս վերջին նկատողութիւնը լիշեցրեց Դաւթեանցին նախընթաց օրուայ դէպքը, որ բոլորովին մտքից ընկել էր. նա լիշեց այն անծանօթի փախուստը, որ նրման էր Արշակին: Այս հանգամանքը չոր լոյս էր սրվառում Արշակի օտարոտի վարմունքի վրայ: Խեղճ երիտասարդը սիրելիս է եղել տ. Աշխարհէգեանցին: Սիրահարին վայել կասկածանքով նա հետևելիս է եղել նորեկին ամեն մի քայլափոխում և նախանշը կրճուում է եղել նրա սիրտը: Ահա այն առիթը, որ նրան գրգռել է և այդ գրգռը թափեց նրա վրայ ժողովի ժամանակ: Մի ծանր զգացմունք տիրեց Դաւթեանցի հոգուն: —Այլ ևս կասկած չկար, որ նա հանդիսանում է իւր սանիկի ախոյեանը: —Երկար ժամանակից ի վեր նրա սրտի խորքում թմրած զգացմունքները դուրս ժալթքեցան. նա տեսաւ իրան մի տեսակ ողբերգական զրուժեան մէջ, որից և խղճահարուեց: Մի սաստիկ յուզմունք խեղտեց նրան և աչքերից արտասուք հոսեցրեց:

— Այսպէս ուրեմն, շշնչաց նա անհաստատ ձայնով, դուք էիք ինձ լրտեսում:

— Այո՛, ես, պնդեց Արշակը զայրոյթով ու ատելութեամբ լի դէմքով:

Մի առ ժամանակ լռութիւն տիրեց. լետոյ Դաւթեանցը ձեռքը դնելով երիտասարդի ուսի վրայ՝ ասաց.

— Սիրելի, կիրքը ձեզ կուրացնում է: Ձեր կասկածը հիմնաւոր չէ. բայց և այնպէս մեղաւորը ես եմ, որ այդ հանգամանքը ձեզ խաբել է և այդքան վշտացրել: Եթէ իմ անխոհեմ վարմունքը լուզել է ձեր միտքը՝ ես շատ ափսոսում եմ:

Արշակը ապշեց այդ խոստովանութիւնից և աւելի պակաս թշնամութեամբ սկսեց նայել իւր խօսակցի վրայ. լանկարծ նոր կասկած փայլեց նրա աչքերում:

— Ես յայտնում եմ ձեզ, շարունակեց Դաւթեանցը, որ այն անձին, որի մասին մենք խօսում ենք, բոլոր սրտովս յարգում եմ, բայց միևնոյն ժամանակ միտք չունիմ նրան հաճոյանալ և ոչ էլ ամուսնանալ նրա հետ... Տեսնում էք, ես պարզ եմ խօսում. դուք էլ մի փոքր հաւատ ունեցէ՛ք դէպի ինձ և պատասխանեցէ՛ք սիրահարուած էք:

Արշակը շփոթուեց և կարմրեց, լսելով դէմ լամդիման իրան ուղղած մի հարց այն սիրոյ մասին, որ խնամքով թագցնում էր իւր սրտի խորքում:

— Ե՛ս, կակազելով հարցրեց նա. ինչից էք ենթադրում:

— Նրանից, ընդհատեց Դաւթեանցը, որ դուք յանձնէք առել լրտեսի պաշտօն, որ աններելի է... կիրքը միայն կարող է ներել այդ լուզմունքը... Դուք սիրում էք տ. Աշխարհեգեանցին:

Երիտասարդ տղան ամօթահար գլուխը կախ գցեց և պատասխանեց խստութեամբ.

— Ի՞նչ իրաւունքով ինձ հարց ու փորձ էք անում:

— Այն իրաւունքով, որ թոյլ էք տուել ինձ ձեր ախոյեանը համարել, որ խիստ դատապարտելի է... Ձեր հակակրօնութիւնը դէպի ինձ նախանձից է առաջ դալիս և այս իսկ պատճառով ես կրկնում եմ դուք սիրահարուած էք տ. Աշխարհագեանցի վրայ:

— Եթէ անդպէս էլ լինի... երգում եմ, որ այն անձնաւորութիւնը, որի մասին մենք խօսում ենք, անտեղեակ է այդ բանին... Ես երբէք ինձ թոյլ չեմ տալ, որ նա կասկածէ այս լիմարութեան մասին:

— Յիմարութիւն. . . Ի՞նչն էք անուանում լիմարութիւն:

— Սիրել մէկին, որի հետ անկարելի է ամուսնանալ... Մենք միևնոյն դասակարգից չենք:

— Այդ խորհրդածութիւնը նշանակութիւն չունի մի կնոջ սրտի համար, որ սիրում է. և ինչո՞ւ համար նա ձեզ չի սիրել: Դուք նրան հաւասար էք կրթութեամբ և խելքով. նա այնքան խելօք է, որ չէր կարող չնկատել ձեր արժանաւորութիւնները... դուք միայն խոհեմ եղէք և մի լուսահատուիք: Այնուամենայնիւ, այն՝ ինչ որ ձեզ կասեմ, կհեռացնէ ձեզանից այն ստուերը, որ քողարկել է ձեր միտքը: Ինձ այլ ևս թշնամի մի համարէք և խնդրեմ համբերութիւն ունեցէք մի փոքր էլի սպասելու մինչև անտառի մասին վերջնական վճիռ կը կայանայ... Վաղը, գուցէ միւս օր, կամ աւելի ուշ, ես ձեզ կը բերեմ մի նոր լուր, որ ձեզ կը համոզէ, թէ սրբան անարդար էր ձեր կասկածը: Ցտեսութիւն:

Նա շտապով հեռացաւ Արշակից, որպէս զի չերեւալ իւր ներքին լուզմունքը:



Մի քանի ժամից յետոյ Դաւթեանցը մտաւ անտառ
 և քայլերը ուղղեց դէպի տ. Աշխարհէգեանի գղեակը:
 Անցնելով անտառի միջով, նա ինքն իրան մտածում էր:
 «Արշակը սիրում է տ. Աշխարհէգեանցին, սա էլ հակուած
 է նրան սիրելու: Միայն հպարտութիւնից երիտասարդ
 տղան վախենում է արտայայտել իւր զգացմունքները,
 երիտասարդ կինն էլ յարգելով աշխարհային պահանջնե-
 րը, թոյլ չէ տալիս իրան ցոյց տալու իւր զգացած սէ-
 րը դէպի նա: Ինչ և իցէ, ինչ հարկաւոր է նրանց օգ-
 նել և միացնել երկու սիրած սրտեր, որոնք կամենում
 են, բայց չեն համարձակում խոստովանել: Նրանք ար-
 ժանի են իրար. դրանց զուգակցութիւնը հազուադէպ
 ուրախութիւն է, որ պարտական կը լինեն ինչ և դը-
 րանով կեանքիս մէջ արած կը լինեմ մի շատ օգտակար
 գործ: Միայնութեանս մէջ ես ինչ կը մխիթարեմ,
 հեռուից մտածելով դրանց բաղտաւորութեան մասին:»

Այս որոշումը թեթեւացրեց նրա սիրտը: Նա մտա-
 խոհ առաջ էր գնում ծառերի միջով: Անտառի մէջ ծա-
 ռերի խտութիւնից տիրում էր կիսախաւար և մի թեթեւ
 զովութիւն: Մանր թխագոյն թեփեր, որով շրջապա-
 տուած էին աճարի ընձիւղները, սրանց փթթելուց ա-
 ռաջ պոկուելով ոստիկներից մանրաշաղ անձրևի պէս
 վայր էին ընկնում գետին: Նրանց ընկնելուց բարձրա-
 նում էր հազիւ լսելի շառաչիւն և երբեմնապէս արևի
 բարակ շողքը փայլ էր տալիս նրանց անշօշափելի ու-
 կեղէն փոշու պէս: «Երիտասարդութեանս օրերից, մը-
 տածօւմ էր Լևոն Դաւթեանցը, բոլոր իմ ժամերը ցը-
 րուել են այդ չորացած թեփերի նման և մի ազնիւ գործ
 մինչև անգամ պատահամբ նրանց չէ լուսաւորել: Այս-
 պէս էլ կը լինի մինչև վերջը՝ կեանքս: տաքանալ

արևի ճառագայթով) — Նրա միտքն էր բաղտաւորացնել Արշակին և այս միտքը նրան տալիս էր համարձակութիւն խօսելու տ. Աշխարհէգեանցի հետ այս փոքր ինչ ծանր ու լուրջ խնդրի մասին:

Այո՛, ծանր է նրա համար այս լանձնարարութիւնը, քանի որ զգում է դէպի այդ կինը մի գաղտնի սէր, քանի որ նրա թովիչ հրապօրները բաբախել են տալիս նրա սիրտը: Անտառի անուշահոտ բուրմուռներին միջից ահա նրան երևում է տիկնոջ ծիծաղադէմ երեսը, որ նրան աւելի է քարշում. նա տեսնում է նրա պտրզ աչքերը, մաքուր ճակատը, նրա թաւշայ կլորիկ թըշերը, նրա չքնաղ շրթունքները: Մի տեսակ տխրութիւն պատեց նրան, յիշելով որ այդ բոլոր փափկութիւնը, կանացի մտերմութեան այդ քաղցրութիւնները նրա համար այլ ևս գոյութիւն չունին: Ձով քամին, որ ժամանակ առ ժամանակ շարժում էր տերևները և որ փչում էր անտառի խորքից, կարծես շնչում էին նրա ականջին՝ «Այլ ևս երբէք»:

Նա արագացրեց իւր քայլերը և քառորդ ժամից արդէն պարտիզումն էր: Սրտի բաբախմամբ և սփռթնած երեսով մտաւ սենեակը:

— Ահ, գոչեց տիկինը, ձեր դէմքից ես նկատում եմ, որ դուք եկել էք ինձ վերջնական բարև տալու: Եւ վշտացած դէմքով շարունակեց.

— Ի՞ժուարանում եմ ձեզ ասել թէ որքան այդ հանգամանքը ինձ վշտացնում է:

Դաւթեանցը հաւատաց տիկնոջ՝ անկեղծութեան:

— Այո՛, պատասխանեց նա նոյնպէս լուզուած, ես եկել եմ ձեզ իմ հրաժեշտս տալու, հաւանական է որ ես վաղը մեկնեմ այստեղից:

— Ի՞նչպէս, այդքան շուտ... Այսօր առաւօտը ես իմացայ որ ձեր ժողովը վերջնական ելք չէ ունեցել: Մի-

թէ անտառային գործից պէտք է հրաժարուենք:

— Ոչ ամենևին... գործին մասնակցողներին պակաս է համբերութիւնը: Ես դեռ ևս չունիմ վարչութեանս պատասխանը, սակայն, թող մեր մէջը լինի, ես համարեա հաւատացած եմ որ այն բաւարար կը լինի:

— Շնորհակալ եմ, որ դուք այդչափ հետաքրքիր էք մեր գործին... Սակայն որքան եմ ցաւում ձեր գնալու վրայ... Ես այնքան սովորել եմ ձեր այցելութիւններին. չեմ կարող երևակայել, որ այս վերջինն է լինելու... Նստեցէք այստեղ, մօտիկ...

Տիկինը խօսում էր անկեղծօրէն և այս հանգամանքը թող տուաւ Դաւթեանցին իսկոյն սկսել գործը, որի համար եկել էր նրա հետ խօսելու: Նա նստեց տիկինը կողքին և ասաց նրան աշխատելով ժպտալ.

— Նախ քան մենք իրարից կը բաժանուենք, տիկին, կցանկայի՞ք արդեօք նորոգել մեր երեկուայ խօսակցութիւնը... Զեր անկեղծութեան և դէպ ինչ ունեցած հաւատարմութեանը ես լիովին չպատասխանեցի, իմ այստեղից հեռանալուց յետոյ շատ կարելի է դատապարտեցիք անտարբերութիւնս: Ոչինչ այդպիսի բան չըկայ: Ընդհակառակն, ես շատ եմ մտածել ինչ հաւատացած ձեր դադտնիքի մասին և շատ հետաքրքիր եղայ:

— Իրաւ... Աւելի լաւ, որովհետեւ ես շատ ամաչեցի որ միայն իմ մասին էի խօսում: Ամբողջ երեկոյ ես ինքս ինչ նախատում էի, որ պատմեցի ձեզ երկարօրէն գլխիս մէջ շրջող ցնորքները:

— Միթէ դրանք ցնորքներ են...

Տիկինը կարմրեց և լայն բացեց իւր չքնաղ աչքերը:

— Այո՛, շարունակեց Դաւթեանցը, ձեր նկարագրած ամուսնու պատկերի մէջ միթէ բոլորը երևակայութիւն էր... Զկա՛յ արդեօք իսկական մի անձն, որի մասին

դուք մտածում էք անգլիականացիք. չկ'ա՛յ մի իդէալ այն ունակուածիւններով, որ ինձ թուեցիք...

— Բայց... ոչ, հաւատացնում եմ. ես չեմ տեսնում:

— Բայց և այնպէս այս գիշեր շատ եմ մտածել այդ մասին և շատ պարզ թափանցեցի ձեր սրտի խորքը:

— Օրինակ, շշնջաց տիկինը հանաքով. այս դէպքում դուք ինձանից հնարագէտ էք եղել... Ի՞նչ է պատահում սրտիս մէջ:

— Կը վորձեմ բացատրել . . . Դուք պատահել էք մի անձնաւորութեան, որին գաղտնի կերպով համակրութիւն էք տածում և որին ձեզ արժանի էք համարում: Եթէ միայն դուք հետևում էք ձեր ճշակին, ուրեմն ինքնաբերաբար գնում էք դէպի այն անձնաւորութիւնը... Բայց այդ երիտասարդ տղան որքան էլ հաւասար է ձեզ իւր խելքով և սրտով, ձեր դասակարգից չէ և վախենում էք, որ ձեր բարեկամները, ձեր դասակարգի մարդիկ կը պախարակեն այդ ընտրութիւնը...

Դաւթեանցի խօսելու ժամանակ, տիկինը շուռ տուաւ երեսը դէպի ծաղկափնջով անօթը և նրանից հանելով մի ծաղիկ ջղաձգութեամբ սկսեց յօշոտել նրա թերթիկները:

— Անկեղծ եղէք, վերջացրեց Դաւթեանցը, ո՞ւրիդ եմ հասկացել:

— Կարծեմ... որ այն, շշնջաց նա, նրան չնայելով:

— Այժմ կամենո՞ւմ էք նրա անունը տամ..

— Ոչ, աղաչեց նա յառելով նրա վրայ իւր վճիտաչքերը: Եւ անկեղծօրէն ոգևորուած ու մի տեսակ ուրախ տրամադրութեան տակ աւելացրեց. — Դուք նրան տեսնո՞ք, նա իմ մասին խօսեց:

— Ոչ, նա այնքան հպարտ է, որ չի բաշուիլ մի օտարականի առաջ:

— Սակայն, գոչեց տիկինը շտապով, թնչպէս կարողացաք գուշակել:

Լևոնը ժպտաց:

— Սիրահարուածների վարմունքի մէջ կայ մի բան, որ օտար մարդու համար դժուար չէ նկատել. այդ բանը ես նկատեցի հէնց առաջին այցելութեանս օրը, երբ ձեզ մօտ ճաշեցի Արշակ Իւզբաշեանցի ընկերութեամբ:

Տիկինը կարմրեց, ժպտաց. նրա աչքերը փայլեցան, բայց ոչ մի բառ չկարողացաւ արտասանել. Փոխանակ նրան մի բան ասելու, նա երախտագիտութեամբ իւր երկու ձեռքն էլ մեկնեց Գաւթեանցին, որը մի քանի րոպէ պահեց իւր ձեռքերի մէջ:

— Ոչ, կրկնեց նա, Արշակը ինձ չէ խոստովանել... վարմունքիս մէջ ինձ թելադրում էր այն կենդանի համակրութիւնը, որ տածում եմ դէպի ձեզ, սիրելի տիկին... Բայց դառնանք մանրամասնութիւններին: Երևում է, որ դուք տատանում էք հետևելու ձեր ձգտումներին միայն հասարակական կարծիքից երկիւղ կրելով, չէ:

Տիկինը համաձայնեց պարզապէս: Թէև նա ապրում է անկախ, բայց քաշուում է ազգականների և բարեկամների բամբասանքից: Գաւառում զանազան դասակարգի մէջ եղած տարբերութիւնը աւելի է աչքի ընկնում և անխնայ դատապարտում են:

— Իհարկէ, ասաց նա, հասարակաց կարծիքը հարկաւոր է աչքի առաջ ունենալ, բայց երբ խնդիրը վերաբերում է իւր կեանքը ուրիշի հետ յաւիտեանս կապելու մեծ ու ծանր խնդրին, այն ժամանակ հարկաւոր է միայն լսել իւր սրտին: Բայց և այնպէս ինչո՞ւ պէտք է հասարակութիւնը ձեզ դատապարտէ: Արշակը շատ բարձր է իւր շրջապատողներից, նա սիրելի և ժողովրդականութիւն վայելող մարդ է իւր երկրում և կարող է մեծ ապագայ ունենալ, եթէ ցանկանայ մտնել պետա-

կան ծառայութիւն և ես իմ կողմից չեմ խնայիլ նրա համար ազդեցութիւնս: Յամենայն դէպս, ինչ թւում է որ նա օժտուած է կարևոր ընդունակութիւններով հասնելու բարձր աստիճաններին: Այլ ևս ինչ է հարկաւոր ձեր դասակարգին պատկանող անձանց: Արշակն այնպիսի երիտասարդներից է, որ կարող է շատ շուտով նրանց գրաւել և իւր գլուխը նրանց սիրելի դարձնել: Դուք շատ էլ ուշադրութիւն մի դարձնէք նրանց կարծիքին. մի կողմ դրէք սնոտի ամաչկոտութիւնը, հետևեցէք ձեր ձգտումներին և սիրեցէք նրան, որին սիրում էք:

Ենորհակալ եմ, պարոն, պատասխանեց նա և մի տեսակ քնքոյշ հայեացքով շնորհակալութիւն լայտնեց այդ խորհրդի համար:

— Օն առջ ուրեմն... Հաւանական է, որ Արշակը շուտով գայ լայտնելու թէ ինչ որոշումն ունեցաւ անտառային գործը: Յիշեցէք, որ նա հպարտ է ու ծածկամիտ: Օգնեցէք նրան, որ ինքն իրան բացուի: Դուք կին էք և ես համոզուած եմ, որ կը դիտենաք նրան քաջալերելու եղանակը, որպէս զի լայտնէ ձեզ իւր գաղտնիքը... Իսկ այժմ, սիրելի տիկին, աւելացրեց նա, վերկենալով, պէտք է մնաս բարև ասեմ ձեզ... երկար ժամանակով:

— Իե՛ռ ևս ոչ.. գոչեց տիկինը, գնալուց առաջ դուք պէտք է այցելէք իմ պարտէզը:

Նրանք դուրս եկան պաշտգամբ և այնտեղից իջան պարտէզ: Տիկինը թեանցուկ Դաւթեանցի հետ շրջում էր ծառուղիներով: Նրանք շրջեցին համարեա բոլոր տեղերն և վերջը մօտենալով մի մարդի, ուր մեծ բազմութեամբ ծաղկում էին վարդի թփեր, տիկինը քաղեց մի վարդ և առաջարկելով Դաւթեանցին՝ բացականչեց երախտագիտական զգացմունքով.

— Թոյլ տուէք ձեզ զարդարեմ... ձանապարհին շըն-

չելով սրա բուրմունքը, կը լիշէք ինձ, բարեկամիդ. նորից ընդունեցէք իմ շնորհակալիքս. դուք բարի եղաք ինձ համար, բարի իբրև հայր:

— Այո՛, իբրև հայր, շնչաց նա, մտածելով թէ որքան հեզնութիւն է ծածկուած այդ խօսքի տակ:

Նա քաշեց տ. Աշխարհագեանին իւր մօտ և մի հայրական համբոյր դրօշմեց նրա ճակատին և շտապով հեռացաւ այնտեղից:

ժ.

Հենց որ Դաւթեանցը մտաւ իւր պենեակը՝ տանտէր իւզբաշին մի հեռագիր տուեց նրան: Դաւթեանցն արագութեամբ բաց արեց և երբ կարդաց նրա բովանդակութիւնը, երեսը փայլեց ուրախութեամբ: Նա դառնալով տանտիրոջ, պատուիրեց վաղուան համար պատրաստութիւն տեսնել, որովհետև գնալու է այնտեղից:

— Միայն կը խնդրեմ ձեզ, աւելացրեց նա, գտնել մի որև իցէ կառք կամ սայլակ, որ ինձ տանէ մօտակալ կայարանը, որովհետև չեմ ուզում քաղաքով վերադառնալ:

— Աղա, ասաց իւզբաշին, մեր գիւղում, բացի Արշակից, ոչ ոք յարմար կառք չունի, եթէ նա յօժարի բան տալ, լաւ կը լինի:

— Իմ խնդիրքս էլ այդ է. պէտք է աշխատել, որ նա յօժարի. ինձ հաճելի կը լինի ուրիշ ճանապարհով վերադառնալ քաղաք:

— Շատ բարի, աղա, ասաց պարկեշտութեամբ իւզբաշին և գլուխ տալով, դուրս գնաց:

Դաւթեանցի ստացած հեռագիրը գոհացուցիչ էր. կենդրոնական վարչութիւնը ընդունում էր նրա առաջարկութիւնը և նոր հրահանգներ այդ մտքով ուղարկել էր տեղական անտառապետին ի գործադրութիւն:

Միև օրը, շատ վաղ, Արշակը իւր կառքով կանգ-

նեց Դաւթեանցի բնակարանի մօտ: Դաւթեանցի իրերը կապեցին կառքի ետևից, իսկ ինքը նստեց Արշակի կողքին: Շուտով կառքը սլացաւ, տանելով Դաւթեանցին այն գիւղից, որ հոգեկան մեծ վշտի աղբիւր դարձաւ նրա համար: Երկինքը ամպամած էր և թեթև մառախուղ քողարկել էր երկիրը: Դաւթեանցը լետ նայեց, մառախուղի քողի միջից նա աչք սոճեց գիւղի տուների շուրջը, իսկ գիւղից հեռու տրտերի ետևից գտնուում էր տ. Աշխարհեգեանի դղեակը անտառի մէջ: Մի թեթև հառաչանք դուրս թռաւ նրա բերանից: Կառքը մօտենում էր մի գոռիվայրին և որովհետև ձիու համար ծանր էր բարձրանալ, Արշակը վայր իջաւ հէնց այն ըոպէին, երբ Դաւթեանցը մտածում էր, թէ ինչպէս սկսէ նրա հետ խօսել նախընթաց օրը դղեակում արծարծած քնքոյշ խնդրի մօտին:

Դաւթեանցը մենակ մնաց կառքի մէջ, պաշարուած տխուր մտքերով. նրա սրտին նոյնպէս պատել էր մի խաւար մառախուղ: Ծուռած նա դիտում էր անտառը, ուր մառախուղը կամ թանձրանում էր կամ նօսրանում և ուր խատուտիկը արձակում էր իւր լալազին ձայնը, որ անձրևային օրուայ նշան էր: Ծանապարհի վրայ պատահած ամեն մի առարկայ լիշեցնում էր նրան անցած գնացած ժամանակը:

Արդէն հասել էին բլրի գագաթին: Թեթև թռիչքով Արշակը բռնեց նորից իւր տեղը կառքի մէջ և մըտրակեց ձին: Դաւթեանցին շատ էր տրտմեցնում այն միտքը, որ մի քանի ժամից լետոյ նա պարտաւոր էր լաւիտեանս մնաս բարև ասել այս առողջակազմ տղային, որին ինքը կնքահայր է եղել և որ այդ մասին ոչինչ չգիտէ: Նա շտապեց նրա հետ մտերմական խօսակցութիւն սկսել, որովհետև անուի իւրաքանչիւր դարձը մօտեցնում նրանց միմեանցից բաժանուելու ժամանակը:

— Կը հասնենք արդեօք գնացքին, հարցրեց Դաւթեանցը Արշակին:

— Ճիշտ չեմ կարող ասել, որովհետև ժամացոյց չունիմ, պատասխանեց Արշակը. բայց անհոգ եղէք, չենք ուշանալ:

— Ուրեմն, հառաչեց Դաւթեանցը, հարկաւոր է ժամ առաջ յայտնել ձեզ այն, ինչ որ հետաքրքիր է ձեզ համար: Ես երեկ երեկոյեան վերջապէս ստացայ վարչութեան պատասխանը: Առաջարկութիւնս ընդունել են: Ես ձեզ կ'յայտնեմ առաջարկութեանս բովանդակութիւնը:

Դաւթեանցը բովանդակութիւնը պատմելուց յետոյ, հարցրեց.

— Գո՛հ էք:

— Իրանից լաւագոյնը մեզ պէտք էլ չէ, գոչեց Արշակը, ձեր մտադրութիւնը արդարացի է և ամենքը մեծ ուրախութեամբ կ'ընդունեն:

— Ահա՛ և հեռագիրը, ասաց Դաւթեանցը, հանելով գրպանից երեկուայ ստացած հեռագիրը: Ոչ ոք դեռ չէ իմանում այս մասին, դուք առաջինն էք իմանում. . . Ես կը խնդրեմ, որ այս նորութիւնը ինքեանքդ հաղորդէք տ. Աշխարհէգեանին: Հաւատացած եմ, որ չէք բարկանալ վրաս այս յանձնարարութեան համար, աւելացրեց նա դառն ժպիտով, — ինձ այնպէս է թւում, որ նա շատ ուրախ կը լինի, եթէ այդ նորութիւնը ձեզանից իմանալ:

— Այսօր և եթ կերթամ տիկնոջ դղեակը, բացառանչեց երիտասարդ տղան և նրա երեսը կարմրատակեց:

Դաւթեանցը մի փոքր քաշուեց Արշակի կողմը և քնքոյշ ձայնով սկսեց.

— Երբ դուք գտնուէք տիկնոջ դղեակում, լիշեցէք որ ամօթխածութիւնը մեծ յանցանք է և որովհետև տ. Աշխարհէգեանը ձեզ սիրում է, մի վախենաք բաց

անել ձեր սիրտը նրա առաջ... Օն առաջ բարեկամ... Բնչը կարող է ձեզ ստիպել տատանուելու: Դուք արժանի էք նրան կրթութեամբ, խելքով և բնաւորութեամբ: Այնուամենայնիւ եթէ կամենաք պսակուելուց առաջ ձեր ինքնասիրութիւնը գոհացնելու համար ստեղծել ձեզ համար որեւէ պատուաւոր դիրք, գրեցէք ինձ... Ես կարող եմ ձեզ օգնել: Տեսնում էք թէ ինչքան սխալուել էք համարելով ինձ ձեր թանկագին իղձերի խանգարիչը: Իմ ցանկութիւնս է, ընդհակառակ, կարելոյն չափ իրագործել նրանց:

Քանի նա խօսում էր՝ Արշակը նայում էր զարմացմամբ և ամօթահար այդ օտարականի վրայ, որ մի անգամից կարիք էր զգում բարւոքել նրա կեանքը: Անկեղծ սրտով նա զգացուեց, երբ լսեց նրա բերանից իրան օգնելու ցանկութիւն: Ամօթի և երախտագիտութեան ըզգացմունքներին նա կարմրեց և մտմտաց:

— Պարոն, ես... ես կը ցանկայի ինչպէս հարկն է ձեզ յայտնել իմ շնորհակալութիւնս, սակայն խօսք չեմ գտնում... Ես ամաչում եմ իմ լիմար կասկածանքներից: Ի՞նչպէս կարողանամ այսուհետեւ ցոյց տալ ձեզ իմ երախտագիտութիւնս և ստիպել ձեզ մոռանալ իմ մեղքը:

— Մի փոքրիկ տեղ տալով ինձ ձեր սրտում, փնթփրնթաց Դաւթեանցը: — Այդ ասելիս նա սկսեց ջղաձգաբար շօշափել իւր ժամացոյցի շղթան: Յետոյ ուրախ ու զրուարթ գէմքով, որ հակառակ էր նրա ներքին լուզմունքին, աւելացրեց. — Պահեցէք այս բանը ժամանակ առ ժամանակ ինձ լիշելու համար... Դուք այս րոպէիս ինձ ասացիք, որ ժամացոյց չունիք, թոյլ տուէք ինձ առաջարկել ձեզ իմս... դա թանկագին բան չէ: Երբ նայէք դրան՝ լիշեցէք մի ծեր ամուրի մարդուն, որին պարզմտութեամբ ձեզ ախոյեան կարծեցիք և որ ընդհակառակն զգում է դէպի ձեզ կատարեալ բարեկամութիւն:

Դաւթեանցը ծոցից հանեց ժամացոյցը և դրեց Արշակի բաճկոնի փոքրիկ գրպանը: Սա մի փոքր շփոթուեց և ամաչեց այս անտեղնկալ պատահարից: Լայն բացած աչքերով, ուր ցոլանում էին եւ անհանգըս տուփիւն եւ քնքշուփիւն, նա սկսեց նայել այդ մարդու վրայ, որին վախենում էր վիրաւորել մերժելով նրանից այդպէս անկեղծութեամբ առաջարկած ընծան: «Օտարոտի մարդ է, մտածում էր նա, բայց սրա դէմքը այնքան բարի է... Ինչու համար վշտացնել սրան»: Լազիւ թէ կարողացել էր լայտնել իւր շնորհակալութիւնը, երբ կոռքը կանգնեց կայարանի առաջ: Երկուսն էլ իջան կառքից. այդ միջոցին էլ գնացքը կանգ առաւ: Դաւթեանցը շտապեց տոմսակ վերցնել և կարգադրութիւն անել իրերի մասին:

Արշակը ճանապարհ գցեց Դաւթեանցին մինչև շոգեկառքը:

— Արի եղէք և մի յուսահատուիք. ցանկանում եմ ձեզ ամենայն յաջողութիւն, ասաց Դաւթեանցը հաստատ ձայնով... Երբ դուք կերթաք դղեակը, չմոռանաք իմ պատուէրը... Իսկ այժմ թող տուէք ձեզ համբուրեմ, որովհետև չենք իմանում թէ երբ նորից կը տեսնուենք:

Նա գրկեց Արշակին և թռաւ շոգեկառքը: Այդ միջոցին գնացքն էլ շարժուեց:

— Մնաս բարև, սանիկս, գոչեց Դաւթեանցը շոգեկառքի պատուհանից:

Բայց նրա խօսքերը լսելի չեղան Արշակին, որովհետև գնացքը արդէն բաւական հեռացել էր նրա կանգնած տեղից: Դաւթեանցը վշտացած սրտով և արտասուելից աչքերով նայում էր կայարանի կողմ, որից ոչ հեռու գտնւում էր տ. Աշխարհէգեանի դղեակը: Վերջը, երբ կայարանը անհետացաւ, նա կուչ եկաւ շոգեկառքի մի անկիւնում և դառն կերպիւ սկսեց հեկեկալ, անիծելով իւր բաղտը, որ այժմ և այսուհետև միշտ պէտք է նա մենակ ճանապարհորդէ իւր կեանքի մէջ: